ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

եւ յաւելած դաստիարակների համար

XVI ՏԱՐԻ № 12 ՓԵԿՏԵՄԲԵՐ 1898 Թ.

***

Տեսել ե՞ս, ընկեր, կայարաններում վառոդով նիհար,

ապանդուխտ բանաս-
տինչհինձու ծիծաղը
դունատ շուրթե-
րուն ահապին բեռը
անզօր ուսերին։
Ծալտում են նրա
ոտները երկտակ
աթեւատ դէմքից
քրտինք է թափ-
ում բանտորը դար-

Ձեռք առած է կատակ եւ գոհ, դիմացիս ուշ է չառած...

Ջ. Ի.



ԲԱՐԻ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Գիւղում ապրում էր մի այրի աղքատ կին, որ ունէր երկու երեխայ՝ Գրիգորն ու Սիրանուշը։ Նրանք երկուսն էլ շատ բարի և հնազանդ երեխաներ էին։ Սիրանուշը ուրախ և աշխոյժ աղջիկ էր. նա շատ էր սիրում իր եղբօրը։ Առաւօտները վաղ վեր էր կենում, լուացւում, մազերը սանրում, եղբօր շորերը խոզանակով մաքրում, նրա նախաճաշիկը պատրաստում, դնում պայուսակի մէջ և նրան ճանապարհ գցում վարժարան։ Գրանով նա վերջացնում էր առաւօտեան գործերը։ Յետոյ ինքն էր պատրաստւում և նոյնպէս գնում էր ուսումնարան։

Մի անգամ ուսումնարանից տուն գնալիս՝ Սիրանուշը ասաց եղբօրը.

—Գիտե՞ս, Գրիգոր, առաւօտեան, երբ դու կերակրում էիր հաւին, մեր դրացի Մարիամ-հօրքուրը եկաւ մեր տունը և մայրիկից տասն կոպէկ խնդրեց. նա ասաց, թէ իր երեխաները քաղցած լալիս են, ո՛չ մի տեղից յոյս չունի փող ստանալու, աշխատել չի կարող... Մայրիկա էլ, մի կտոր հաց տալով նրան՝ ասաց. «Առ այս մի կտոր հացը, առայժմ մի քիչ կերակրիր զաւակներիդ, մինչև որ Գրիգորը գայ ուսումնարանից և երեկւայ իր ստացած փողով ձեզ համար մի քիչ հաց առնէ. նա տասն կոպէկ է ստացել մի պարոնից՝ նրա պայուսակը կայարան տանելու փոխարէն»: Մինչև որ ես մայրիկի հետ ճաշի սեղանը կըպատրաստեմ, դու կըգնաս չուկայ և կըբերես հացը, այնպէս չէ՞: Ահա, Գրիգոր, եթէ իմանայիր, ինչպէս լաց եղաւ Մարիամ-հօրքուրը և օրհնեց քո կեանքը: Հիմա նա անհամբեր սպասում է քո տուն գնալուն. ինչքան կուրախանան Հռիփսիկն ու Շուշանը, երբ դու ճաշ տանես նրանց համար:

—Այսօր մայրիկս գետնախնձոր է խորոված մեզ համար,—ասաց Գրիգորը. ես իմ բաժինը նրանց կըտամ:

Այսպէս խօսելով՝ քոյր ու եղբայր հասան

տուն: Գրիգորը պայուսակը դրեց սեղանի վրայ եւ վազեց մայրիկի մօտ: Մայրը պատմեց Մարիամի թշւառ դրութեան մասին:

—Մարիամ-հօրաքոյրը աղքատ, հիւանդոտ եւ այրի կին է,—ասաց մայրը. նա չի կարողանում աշխատել: Տե՛ս, վաւակս, մենք ինչքան բախտաւոր ու հարուստ ենք, որ առողջ ենք եւ կարող ենք աշխատել: Աշխատասէր եւ ողորմած մարդը ամենից հարուստն է: Աշխատի՛ր, սիրելիս, բոլոր տառապածներին օգնել, ինչով կարող ես. դա մարդկային պարտք է. պէտք է այդ սուրբ պարտքը կատարես:

Գրիգորը մօրից առաւ իր աշխատած տասն կոպեկը, չտապով գնաց շուկայ, հաց առաւ եւ տարաւ դրացի Մարիամի տունը: Երեխաները վրայ թափուեցին: Գոհ եւ ուրախ ժպիտը փայլեց նրանց երեսին: Մարիամը չնորհակալ եղաւ եւ պատասուքն աչքերին՝ կրկին օրհնեց նրան: Գրիգորը, ուրախ, զարթ դուրս եկաւ նրանց տանից. շատ գոհ եւ ուրախ էր, որ կատարեց իր մարդկային պարտքը: Ճանապարհին նա մտածում էր. «Որքան մեծ բաւականութիւն է ուրիշին ուրախացնելը. ինչքան ուրախացան Հռիփսիմն ու Շուշանը. եթէ նոյնքան էլ Սի-

բանուշ-քույրիկս կուրախանայ, եթէ նրա համար մի փունջ ծաղիկ տանեմ. նա ծաղիկները չատ է սիրում». այսպէս մտածելով՝ նա քայլերը ուղղեց գէպի մօտիկ անտառը։ Ճանապարհին, մի կալի մօտով անցնելու ժամանակ, նա տեսաւ, որ իր հասակակից մի քանի երեխաներ վայրով խառնւում են կալապանի աւաստոցի ներքը. մի անգամ էլ վայրը պինդ կրեցին գէպի ներս։ Այդ ժամանակ այնտեղից ծածկով վայր թափուեցին ծփծեռնակի կիսամեռ ձագուկները։ Գրիգորը չբկարողանալով տանել այդ անգթութիւնը՝ մօտ գնաց և հարիւ զսպելով արտասուքը՝ ասաց.

—Չէ՞ք ամաչում, չէ՞ք ափսոսում, որ այդպէս անգութ կերպով քանդում էք փոքրիկ, անպաշտպան թռչնակների բոյնը և չարչարում անմեղ ձագերին. տեսնո՞ւմ էք, ի՞նչպէս աղիողորմ ծածւում են նրանք։

Երեխաները, արդարացնելով իրանց՝ ասացին.

—Նրանց հայրերը և մայրերը մեր պարտիզի գողոր կեռասները կոցահարեցին...

—Գիտեմ,—ասաց Գրիգորը. մեր պարտիզումն էլ թռչունները կոցահարեցին կեռասները, բայց դա ոչինչ. դուք չգիտէք, թէ թռչ-

Հաւանները ինչ օգուտներ են տալիս. Գոյի միջից նրանք ոչնչացնում են բոլոր վնասակար որդերը. եթէ նրանք չլինէին, որդերը կուտէին ծառերի բոլոր պտուղները ու տերևները և բոլոր բոյսերը կոչնչացնէին։

Երեխաները ամաչելով գնացին տուն և երկար ժամանակ խօսում էին Գրիգորի բարութեան և գովելի վարմունքի մասին։ Նրանք բոլորը Գրիգորից շատ գոհ մնացին, որովհետև նրանից սովորեցին մի շատ մեծ բան — սիրել բոլոր արարածներին և կարեկցել ամենքին։

Ռոբիա Տէր-Մովսիսեան

Ի՛ՆՉ ԷԻՆ ԱՂՄԿՈՒՄ ԱՆՁՐԵՒԻ ԿԱԹԻԼՆԵՐԸ

—

Ալլում էր Արեւմուտքում գարնանային արեգակը, իսկ արեւելքում վառալեղ կերպով չողշողում էր ծիածանի եօթգունեայ ժապաւէնը։

Երանուհին՝ կանգնած պատշգամի վրայ՝ զմայլւում էր...

Ոսկեփայլ անձրեւի խոշոր կաթիլները զարթագին թափւում էին երկրի վրայ։ Նրանք հանդարտ աղմկում էին և, կարծես, աչխոյժ կերպով խօսում։

Երանուհին կանգնած լսում էր անձրեւի կաթիլների աղմկալի թոթովմունքը։

— Մեզ ուղարկում է երկինքը, — աղմկում էին կաթիլները, — որ կենդանացնենք մարգերն ու

անտառները, այգիները ու արտերը։ Առանց մեզ՝ նրանք կըչորանային ամառւայ տօթից։

«Մենք այնքան ծեր ենք, որ դուրմիւն ունենք և այն ժամանակ, երբ երկրի վրայ դեռ չկային ո՛չ բոլսեր, ո՛չ կենդանիներ, ո՛չ մարդիկ։

«Մենք այնքա՛ն չատ ենք, որ եթէ բոլորս միանգամից թափուէինք երկնքից, կըհեղեղէինք ամբողջ երկիրը։

«Աչխարհի ստեղծագործմեան ժամանակ մենք ծածկեցինք երկրագնդի մակերևոյթի երեք քառորդից աւելին և պոյտրինք ծովերը, ովկիանոսները, գետերը, լճերը, ճահիճները, առուակները, աղբիւրները։

«Մեր մարդուն ու վճիտ ջրերից ենք խոնարհել ենք առաջին մարդուն, առաջին կենդանիներին և առաջին դալարը։

«Հին ժամանակներում մեր ջրերի մէջ նաւարոում էին այնպիսի հսկայական կենդանիներ, որ նրանց մօտ հիմիկւայ ամենամեծ ծովային կենդանիները՝ կետը և չնաճուկը (ակուլա) փոքրիկ ձկների կըննմանուէին։

«Մենք հարուստ ենք։ Մեր ծովերի, գետերի և լճերի խորքերում թագնուած են անթիւ,

անհամար կենդանիները, ճկները, թանկագին լուրեր:

«Իւրաքանչիւր տարի մեր ջրերից մարդիկ տասնեակ միլիոնների մոյն ճուկ են բռնում:

«Իսկ որքան ուրիշ բաներ կան թագնուած մեր ջրերում,—տեսակ-տեսակ հանքեր ու մետաղներ՝ ոսկի, արծաթ, ադամանդ, մարգարիտ և այլն:

«Մենք մեզ վրայ ամեն օր տանում ենք բազմաթիւ, մեծ ու փոքր, նաւեր, չոգենաւեր՝ բեռնաւորուած ամեն տեսակ ապրանքով, գերանների լաստեր:

„Մենք զարհուրելի ենք փոթորկի ժամանակ, երբ քամին այնպիսի ուժով է քշում մեր լեռնանման, աղմկալի ու կատաղի ալիքները, որ երբեմն ջարդ ու փշուր ենք անում ահագին, ամրապինդ նաւերը:

Այդպիսի դէպքերում շատ մարդիկ են խեղդւում և շատ հարստութիւն է ջրի տակը անցնում մեր ծովերում և մեծ գետերում:"

«Թրկ—թրկ—թրկ», —անդադար թոթովում էին անձրեւի կաթիլները:

„Մենք կեանք, թարմութիւն և առողջութիւն ենք տալիս երկրի վրայ ապրող ամեն բա-

նի — բոյսերին, կեն դանիներին և մարդկանց: Մենք չուր ենք տալիս նրանց. առանց մեզ՝ նրանք կըմեռնէին ծարաւութիւնից:

„Ամառւայ տօթերին մենք թարմացնում ենք օդը և մաքրում ենք նրան փոշուց. մենք մաքրութիւն և առողջութիւն ենք տալիս:

„Մենք միշտ էլ մատղաշ ենք. ամեն օր մեռնում ենք և յարութիւն ենք առնում:

„Մեզ երկինքն է ուղարկում երկրին, իսկ ժողովում է և կրկին երկինք է քարձրացնու պայծառ արեգակը:

„Հէնց որ նրա ոսկեվայլ ճառագայթները նայում են մեզ վրայ, մենք դառնում ենք նո՛ր և անտեսանելի գոլորշի և արագութեամբ թռչում ենք դէպի երկնքի խորքերը: Մենք մեծ քանակութեամբ ժողովուում ենք այնտեղ և երբ ընկնում ենք պաղ օդի մէջ, սկսում ենք թանձրանալ և գոլորշուց փոխուում ենք ջրի մանրիկ կաթիլների: Այն ժամանակ մեզ կարելի է տեսնել երկրից, և մենք՝ կապոյտ երկնի վրայ լողացող գեղեցի՛կ, մարգարտավայլ ամպեր ենք թուում մարդկանց: Ո՛րքան չատ ենք թանձրանում, այնքան աւելի ենք ծանրանում և, վերջապէս, թափուում ենք երկրի վրայ անձրևաւոր կաթիլներով:

„Ընկնելով երկրի վրայ՝ խնդագին վազում ենք միախորհուրդ առուակներով և թափւում ենք գետերը, գետակից ծովը և ովկիանոսները, իսկ այնտեղից հզօր արեգակը, ամբողջ ընութեան արքան նորից ուղարկում է մեզ դէպի կապոյտ երկինքը։

„Այստեղ մենք կրկին ժողովւում, ամպեր ենք կազմում. քամին տարածում է մեզ ամբողջ երկրագնդի վրայ, և մենք ժամանակ-ժամանակ կրկին թափւում ենք երկրի վրայ խոշոր կամ մանրիկ կաթիլներով. թափւում ենք հանգիստ ու անադանակով կերպով կամ փոթորկալից որոտ ու կայծակով։ Այդպէս ճանապարհորդում ենք մենք դարերի ընթացքում։“

«Ջը՛լք—ջը՛լք—ջը՛լք» — նորից թոթովում են անձրեւի կաթիլները.

„Ամեռը մենք սառչում, փաթիլ—փաթիլ ձիւն ենք թափում և փափուկ, ձիւնափայլ խանձարուրով ծածկում ենք դաշտերն ու մարգերը, որով դառնաչունչ ցրտից պաշտպանում ենք երկրի վրայ ցանած քնքոյշ սերմերը և խոտերի, ծաղիկների ու հացաբոյսերի արմատները։ Առանց մեզ՝ նրանք կըմեռնէին սաստիկ ցրտերից։

„Մեր ջրերը ձմեռալին ցրտի պատճառով՝

քարի նման ամուր սառույց են դառնում: Սառույցը թեթև է ջրից և նրա տակը չի անցնում: Եթէ սառույցը ընկղմւէր ջրի մէջ, այն ժամանակ գետերի, լճերի և անուշահամ ջուր ունեցող ծովերի ջուրը (մեծ ծովերի ջուրը դառնապղ է և դժւար է սառչում) կըսառչէր մինչև յատակը և բոլոր ջրային բոյսերն ու ձկները կըմեռնէին ցրտից: Բայց այդպէս չի լինում:

Սառույցը չի ընկղմում, այլ վերևից ծածկում է՝ ջուրը հաստ ու ամուր կեղևի նման, որի տակ պահպանւում է՝ ջրային բոյսերի և ձկների համար հարկաւոր տաքութիւնը:

„Հէնց որ գալիս է գարունը, ձիւնը և սառույցը սկսում են արագութեամբ հալւել ու ջուր դառնալ. գետերը վարարում են, դուրս են գալիս իրանց ափերից և հեղհեղում են մարգագետիններն ու դաշտերը:

„Վարարելուց յետոյ՝ գետերը իրանց հեղեղած երկրի վրայ թողնում են պարարտացնող, արգաւանդ տիղմ:

„Ծովից, լճից, ճահճից կամ գետից վերցրած մեր ամեն մի կաթիլի մէջ բնակւում են հազարաւոր կենդանի էակներ:

„Այդ էակները այնքան մանր են, որ նրանց

չի կարելի սովորական աչքով տեսնել, այլ պէտք է նայել մի առանձին ապակու միջոցով, որի անունն է խոշորացոյց։

«Ծըլք—ծըլք—ծըլք», զարկում էին միմեանց անձրեւային կաթիլները և խնդագին թոթովում.

„Մենք բնութեան գեղեցկութիւնն ենք!

„Ի՛նչը կարող է գեղեցկութեամբ հաւասարուել գետի կամ լճի պայծառ ու չինչ մակերևոյթի հետ, որոնց ջրերում, ինչպէս հայելու մէջ, արտացոլւում են և կապոյտ երկինքը իր չողչողուն արեգակով, և՛ օդային նուրբ ամպերը, և խոտի ու դանդրադեղ թփերի զմրուխտանման դալարը, և՛ մեր կենսատու հեղուկով աճած ու ֆիւսիւսացած՝ ծաղիկների դեղին, կապոյտ կամ ալ աչիկները...

„Մարդիկ զմայլւում են եօթգունեայ ծիածանով, որը արևի ճառագայթների խաղն է ամպերից թափւող անձրևային կաթիլների մէջ։

„Արեգակի ծագելուց յետոյ, պայծառ առաւօտներին նայեցէ՛ք յօղասպաս խոտին. ձեզ կըթւայ, թէ մի անյայտ ձեռք սեղմել է հազարաւոր թանկագին ադամանդներ, որոնք չողչողում են ծիածանի եօթը գոյնով—կարմիր, կապոյտ, կանաչ, նարնջագոյն, դեղին եւ մանիշակագոյն։

Դա արեգակն է իր ճառագայթներով խաղում մեր կաթիլների մէջ։

Ձմեռ ժամանակ ի՞նչը կարող է աւելի գեղեցիկ լինել՝ քան մաքրափայլ եղեամով ծածկուած անտառը, որը կարծես զգենուաւորուած լինի արծաթեայ, աստղազարդ և ծաղկահիւս շուքջառով: Նրա վրայ փայլում է խորունկ, կապոյտ երկինքը, որտեղից արև-արքան իր ոսկեփայլ ճառագայթներով չողչողում ու փայփայում է ամենքին և ամեն բան: Շուրջը տարածւած է ձիւնով ծածկւած անեզր հովիտը, որը չողչողում է իր վրայ փռւած աղամանդներով, աստղերով, հմայական ծաղիկներով... Դա արեգակն է խաղում ձիւնի հատիկների մէջ,,—ազմկում էին կաթիլները, անզուսպ թռչկոտում և ուրախ թոթովում...

Երանուհին մտախոհ լսում էր:

Բայց ահա՛ ընկան անձրևի վերջին կաթիլները: Ծիածանն անհետացաւ: Օդը բուրում էր: Անտառում ծլվլացին երգող թռչունները իրանց զիլ և դողդոջուն ձայնով: Արեգակը մայր էր մտնում:

Օրը անցաւ. սկսւեց խաղալ ու ծիրանեալ գիշերը:

Հ. Տէր-Գրիգորեան

Ա Մ Ի Ր Ա Ն

I

Փեղանից ոչ հեռու, Վրաց աշխարհում,
Կուկաս լեռների լանջերից մեկում,
Ուր Լեխաստա գետն է հոսում վրփրած,
Քարափի գլխին հովիւ էր նստած։

Նա նըւագում էր իր սալամուրին *)
Ու հանգիստ տալիս իր ոչխարներին։
Քաղցր հնչիւնը սալամուրիի
Եւ կարկաչիւնը արծաթ ջրերի
Իրար խառնւելով ընութեան ծոցում,
Մի կախարդական երգ էին կազմում։
Անուշ գեղգեղից ձորեր, սար ու քար,
Ըզմայլւում էին, ձայն տալիս իրար։
Ջահել վրացին երգից տաքացաւ
Ու իր խաչներին խսպառ մոռացաւ։

*) Սրինգ։

Հօտի առաջնորդ երկու այծերը
Քաշւեցին հեռու, դէպի լեռները,
Ոչխարներին էլ իրանց հետ տարան,
Հովիւի աչքից հեռացան կորան։

II

Եւ հրապուրւած հովիւն ըսթափւեց,
Թողեց սրինգը, իր չուրջը նայեց.
Բայց հօտը չը՛կար... իսկոյն նա իջաւ
Քարափի գլխից, մահակն առաւ,
Դէպի լեռները գնաց վազելով,
Ցիրուցան հօտը ժողվեց հապճեպ։
Բայց չարաճճի երկու այծերը,
Տըմբտըմբացնելով ձիգ մօրուսները,
Երկայն ոտքերը օդում չարժեցին,
Կամակոր ձայնով պինդ մըկըկացին.
Ապա թռչելով քարափից-քարափ,
Վազեցին, հասան Լեռնաւալի գետափ։
Հովիւը յոգնած՝ վազում էր վազում,
Ճարպիկ այծերին հասնել չէր կարում։
Գետի եզերքից այծերը վախան,
Վազեցին ձորը ու աչքից կորան։
Հովիւը քրտնած՝ վազում էր, վազում,
Ըմբոստ այծերին գտնել չէր կարում։

—

III

Եւ մեր հովիւը յոգնած, չնչասպառ,
Ահա բարձացաւ մի սարի կատար.
Երկար աչք աչեց, նայեց իր չորս դին,
Փախած ոչխարը դարձեալ չըկային։
Յանկարծ նա լսեց խոր-խոր ձորերից
Մի հսկայական ձայն անըռնելից.
Ահ ու սարսափից հովիւը ցնցւեց
Եւ արձան կտրած՝ ականջը լարեց։
Այդ զարհուրելի ձայնից դաժան
(Ոչ որոտմունք էր և ոչ էլ գազան)
Լեռներ ու ձորեր դղրդում էին
Ու դղրդոցը վերացնում երկին։
Փոքր սիրտ առած՝ հովիւը ջահել
Դէպի այդ ձայնը ըսկըսեց քայլել։
Քանի հովիւը առաջ էր գնում,
Այնքան այդ ձայնը հուժկու էր դառնում։
Եւ նա պատեանից դաշոյնը հանեց,
Մի մեծ քարայրի առջևում կանգնեց։

IV

Նա իր երեսը խաչակնքելով՝
Ներս մտաւ այրը ահ ու սարսափով։
Յանկարծ նա տեսաւ յատակի վրայ
Փռւած, պառկած չ աժդահայ—հսկայ...

Հովիւն ծնկները ահից դողացին,
Գլխի մազերը բիզ-բիզ ցցուեցին...
Հաստ չղթաներով կապուած, կաշկանդուած,
Հսկան ընկած էր, գետնին ամրացրած։
Նա մռնչում էր, ուժգին հառաչում,
Անարկու ձայնով այրը տատանում։
Ճգնում էր փշրել չղթան ամրակուռ,
Բայց նորա ջանքը անցնում էր իզուր։
Հսկայի կողքին մի սուր էր ընկած,
Իսկ միւս կողքին դրած էր չոր հաց.
Շղթայած ձեռքը սըրին էր մեկնում,
Բայց նա հեռու էր, ձեռքը չէր հասնում.
Ամուր կապանքը ճգում էր կրկին,
Յուսահատ դոչում, հառաչում ուժգին։

V

Հովիւը չըչեց և վախչել ուզեց,
Սակայն ժողովրդեան չետևից կանչեց.
„Մի վախիր ինձնից, դու ով բարի մարդ,
Եկ, մօտեցիր ինձ անվախ ու հանդարտ!“
—„Աւա ինձ, ո՞վ ես, վիթխարի հսկայ.
Զար ոգի ե՞ս դու, թէ քըրիստոնեայ.“
„Ես նա եմ, որը ճեղքեց ամպերը,
Սլացաւ վերև, դէպի աստղերը.
Ես նա եմ, որը երկինք վերացաւ,
Յիսուսի կողքին փառքով բազմեցաւ.

Ես նա եմ, որը չքնաղանդևեց,
Տիրոջ պատևէրը ոտքի տակ տևեց.
Ես նա եմ, որը երկնքից արդար
Գողացաւ կրակն ու բերեց աշխարհ.
Խնձ արգելւած էր, բայց ես գողացայ,
Այդ պատճառով էլ այս օրին հասայ.
Ես նա եմ, որին ամբողջ Վրաստան
Վաղուց լիշում է, կոչում Ամիրան"...

VI

Հէնց Ամիրանի անունը լսեց,
Իսկոյն հովիւը երկիւղից ցնցւեց.
Նորա աչքերը յանկարծ մթնեցին,
Նա տատանւեցաւ ու փուեց գետնին:
Իսկ Ամիրանը առաջւայ նման,
Ուժգին գոչում էր, ձգձգում չղթան:
Երկար դարերով հսկան բանտարկւած
Իր մթին այրում, չղթայով կապւած,
Արցունք էր թափում, դառըն հեկեկում,
Աստուծոյ տրւած պատիժը կրում:
Եւ հրեշտակը երկնից ամեն օր
Բերում էր այրը մի հացի կտոր:
Իսկ եօթը տարին հազիւ մի անգամ,
Ֆարաւրի պատը բացւում էր առժամ,

Ծննդեան պատրաստութիւններ

Արևի շողքը քիչ ներս էր մտնում
Ու դարձեալ փախչում, բանտը մթնացնում։
Այսպէս Ամիրան իր մեղքի համար
Գետնից չղթայած՝ տանջւում էր երկար։

VII

Երբ որ հովիւը քիչ ուշքի եկաւ,
Հսկան խրախուսեց, նորան սիրտ տըւաւ։
Հովիւը տեսաւ նորա տանջանքը
Ու յայտնեց իրան սրտի ցաւանքը.
„Թէ ես կարենամ, թէ ձեռքովս գայ,
Անշուշտ քեզ կօգնեմ, տառապեալ հըսկայ!“
—„Սուրս մօտեցրու. սուրս թէ ինձ տաս,
Ես կըխորտակեմ այս ծանր չղթաս“։
Բարի հովիւը երկար չարչարւեց,
Բայց ծանր սուրը տեղից չըշարժւեց։
—„Օ, աղաչում եմ, չուտով տուն վազիր,
Պարան կամ չղթայ բեր, սըրիս կապիր.
Այնժամ պարանով սուրըս կըքաշեմ,
Կըմօտեցնեմ ինձ, չղթաս կըփշրեմ.
Եւ երբ ազատւեմ իմ կապանքներից,
Թանկագին վրկանք կըստանաս ինձնից։
Սակայն զգոյշ կաց, որ վերադարձին
Չըխօսես քնաւ, չըխօսես ճանըփին!...

—

VIII

Հովիւը իսկոյն ճանապարհ ընկաւ,
Վազելվազ գնաց, իրանց տունն հասաւ։
Նա առաւ իր հետ հաստ-հաստ պարաններ
Եւ մի քանի հատ ամուր չղթաներ.
Անխօս, լուռ ու մունջ դուրս ելաւ տնից,
Դէպի քարայրը ըչտապեց նորից։
Նա դեռ չէր հասել հսկայի բանտին,
Երբ որսորդները նորան բռնեցին.
„Էյ! ուր ես տանում չղթան, պարանը.
Շուտ ասա, թէ չէ բուրդ է քո բանը!“
Հովիւը լուռ էր, ոչինչ չէր խօսում.
Բայց որսորդները նորան չարչարում,
Քաշքշում էին, ծեծում անխնայ,
Որ հարց ու փորձին նա պատասխան տայ։
Համբերութիւնից հովիւը ելած,
Հանեց դաշոյնը, գոչեց կատաղած.
„Հառամզադաններ! ինձ հանգիստ թողէք,
Թէ չէ բոլորիդ կըմորթեմ մէկ-մէկ“!...

IX

Յանկարծ երկինքը ուժգին որոտաց,
Ամբողջ աշխարհը թնդաց, դղրդաց,
Լեռան գագաթից պոկուեցաւ ժայռը
Գլորուեց ներքև, դէպի քարայրը։

Եւ որսոր ներըը երկիւղից վախան,
Նապաստակի պէս ձորում կուչ եկան։
Վազեց հովիւը, վազեց չնչասպառ,
Հասաւ այրի մօտ... բայց ճանփայ չըկար.—
Վիթխարի ժայռը անյողդողդ կուրծքը
Թեքել էր այրին ու փակել մուտքը։
Եւ յուսահատած հովիւը լացեց,
Երկար հեկեկաց, հակային կանչեց.
«Ամիրան! օ, իմ խղճուկ Ամիրան...
Ախ, ո՞ւր ես, ձայն տուր. տուր ինձ պա-
տասխան...»
Բայց ժայռի տակից ոչ մի ձայն չըկար.
Լեռներն էին ձայն տալիս իրար,
Միանում հովւի ողբին դառնագին,
Ընդհանուր սուգը վերածնում երկին...

X

Եւ Ամիրանի տխուր վախճանը,
Այժմ էլ լիշում է ողջ Վրաստանը,
Մինչև հիմա էլ Կովկաս լեռներում,
Որտեղ Կազբեկն է երկինք ամբառնում,
Մեր մեծահոգի հովիւի տարած
Ղեթռաներն են գեռնլին թափթփած։

Գաբրիէլ Թումանեան

ՀՐԷՈՍՏԱՆԻ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ

Մէկ անգամ Քրիստոսը իր առաքեալների և աշակերտների հետ անցնում էր Հրէաստանով: Ճանապարհին նրանք հանդիպեցին մի աղքատի. դա մէջքը կռացած, նիհար և ուժից ընկած ծերուկ էր: Նրա երեսը պատած էր խոր կնճիռներով, աչքերը խոր ընկած, հագին փայլում էին խիտ և ճերմակ յօնքերի տակից. նրա պատառոտած հագուստը հագին էր ծածկում արևից այրուած, մերկ մարմինը: Ծերուկը մուրացկանութիւն էր անում. մի ձեռքով յենւում էր գաւազանի վրայ, իսկ միւսը պարզում էր ողորմութիւն խընդրելու:

Քրիստոս օրհնեց նրան և լռութեամբ անցաւ նրա մօտով:

Առաքեալները և աշակերտները շատ զարմացան, որ Քրիստոսը ողորմութիւն չըտւեց ծերուկ-աղքատին. զարմացան, բայց ոչինչ չասացին:

Գարձաւ կէսօր: Արեգակը պայծառ երկնքից անխնայ կրակէր թափում Հրէաստանի վրայ: Աշակերտները յոգնել էին շոգից և ցանկացան քիչ հանգստանալ: Նրանց անցած ճանապարհի մօտ կանաչ բլուրի վրայ կար մի փոքրիկ անտառ,

որի միջով կչկչալով հոսում էր փոքրիկ առուակը: Քրիստոս ուղղեց իր քայլերը դեպի այդ անտառը, մտաւ թանձր ստւերի տակ և նստեց մի քարի վրայ, իսկ աշակերտները տեղաւորուեցին Նրա շուրջը գետնի վրայ:

Նրանք հանեցին իրանց հետ վերցրած պաշարը, սկսեցին կամաց-կամաց ուտել, վրան էլ սառ ջուր խմել: Իսկ Քրիստոս, գլուխը խոնարհած՝ խոր մտածմունքի մէջ, գետնին էր նայում: Յանկարծ Նա բարձրացրեց գլուխը և ասաց.

—Ահա մի անօթի աղքատ է գալիս մեզ մօտ:

Աշակերտները սկսեցին դէս ու դէն նայել, բայց ոչ ոքի չըտեսան. նրանցից մէկը այն ժամանակ հարցրեց զարմացմամբ.

—Վարդապետ, ո՞րտեղ տեսար Դու աղքատին:

Այդ րոպէին մօտեցաւ նրանց մի պատանի ուրախ և զւարթ, աղքատ հագուստով և ողորմութիւն խնդրեց: Քրիստոս ինքն իր ձեռքով իսկոյն մի մեծ կտոր հաց կտրեց և տւեց նրան:

Աշակերտները մնացին ապշած Քրիստոսի այդ վարմունքից և երբ պատանին հեռացաւ, նրանցից մէկը հարցրեց Քրիստոսին.

—Վարդապետ. ասա՛ մեզ ինչու Դու հաց տւիր այդ առողջ և ուժեղ պատանուն, իսկ ոչինչ չըտւիր այն հիւանդ, ուժից ընկած ծերուկին:

Քրիստոս նայեց հեռացող պատանու յետևից և պատասխանեց.

—Թո՛ղ ձեր սրտերը չ'երկմտին, որ այդ պատանին այդպէս զւարթ է. նա ուրախ է այդպէս, որովհետև նրա սիրտը մաքուր է և խիղճը հանգիստ: Նրա երեսը ձեզ տարակուսանքի մէջ ձգեց, բայց, ճշմարիտ եմ ասում ձեզ, այդ պատանին բոլորովին աղքատ է, նա այժմս առանց գործի է և ահա երկու օր է, որ ոչինչ չի կերել: Նա ողորմութիւն խնդրեց մեզնից, որովհետև քաղցած էր և ոչինչ չունէր հաց գնելու...

Իսկ այն ծերունուն ողորմութիւնը ամենևին հարկաւոր չէ, նա կարօտութիւն չունի... Բայց ժամանակ կրգայ և դուք ինքներդ կըհամոզուիք իմ խօսքերիս ճշմարտութեան մէջ:

Փիչ ժամանակից յետոյ Քրիստոս միևնոյն ճանապարհով վերադառնում էր Երուսաղէմ իր առաքեալների և աշակերտների հետ:

Պարձեալ կէս օր էր. դարձեալ արեգակը անխնայ կրակ էր թափում Հրէաստանի վրայ: Աշակերտները դեռ հեռուից նկատեցին ծերուկ աղքատին. նա կանգնած էր միևնոյն տեղը, որտեղ նրան տեսել էին առաջ: Կանգնած էր պատառոտած հագուստով, ձեռքը պարզած, կուչ եկած, անշարժ և անձայն, կարծես թէ ճանապարհի մօտ դրած արձան լինէր: Նրա մեկնած չոր ձեռքը չէր դողում, գլուխը չէր շարժում. նա, կարծես, բոլորովին թմրած լինէր արեգակի այրող ճառագայթների տակ:

Երբ մօտեցան, տեսան որ ծերուկը քար է դարձել. նրա ոտների մօտ ընկած էր փողով լիքը քսակը, որի բերանը պատռւել և փողերի մի մասը գետնին էր թափւել: Դրամները արեգակի տակ կարմրին էին տալիս, կարծես թէ ներկւած լինէին արիւնով...

Եւ այդտեղ մարդկ Հասկացան, որ ճշմարիտ էր Քրիստոսի խօսքը. Հասկացան, որ ծերունին ողորմութեան կարօտ չէր—նա Հարուստ էր. միայն ձևացել էր աղքատ և այդպիսով կամենում էր խաբել և՛ Աստծուն և՛ մարդկանց. Հասկացան մարդիկ, որ նա շատ խստասիրտ և անգութ էր դէպի իր մերձաւորը, որ նա աշխարհիս երեսին փողն ամեն բանից շատ էր սիրում, Հասկացան նմանապէս, որ այդ մարդու սիրտը նրա ամբողջովին քար դառնալուց առաջ էր քարացել:

Լռութեամբ անցաւ Քրիստոս ծերունի մօտով. լուռ ու մունջ անցան նրա ետևից և աշակերտները: Իսկ քարացած

արծաթասերը մնաց կանգնած ճանապարհի մօտ կէս օրւայ արեգակի այրող ճառագայթների տակ։

Երդէն շատ գարեր կանգնած է նա այնտեղ՝ Հրէաստանի անապատում՝ վառ աւազների մէջ և դեռ շատ երկար ժամանակ կըմնայ կանգուն։

Նա փոշի կըդառնայ, նա կանհետանայ այն ժամանակ միայն, երբ մարդ կըդադարի արծաթը պաշտել, երբ նա կըյարգէ իր մերձաւորին և կըսկսէ սիրել նրան այնպէս, ինչպէս սիրում է իր անձը։

Թարգմ. Ա. Մնացականեանց



Չրմեռ մը ցուրտ յանկարծակի
Օդին վրայ կըյարձակի.
Եւ թռչուններ իրենց բախտէն
Տրտնջելով հեռու գաղթեն։

—

Բայց ետ մնաց խումբ մը տըկար,
Որ չէր չնչեր, այլ կըտըքար.
Եւ ողբերգով կողկողացին
Հազիւ հատաւ մօտ գիւղակին։

—

Եղան ամենքն հոն ցիրևցան,
Ի միասին ալ չերևցան.
Եւ մին այդ խեղճ, խեղճ թռչնեկաց
Փոքրիկ մի տան մօտն էր եկած։

—

Աչուկներով իր նրւաղոտ
Պատուհանէն տեսաւ աղօտ
Քանի մը դէմք—մայր ու հանին,
Աղջիկ մ'ալ մօտ պատուհանին։

—

Մին կըլեցնէր, կըկարկըտէր
Գուլպաներու ճակած քթեր.
Հանին դարձնէր մի ճախարակ
Երբեմ դանդաղ, յաճախ արագ։

—

Աղջիկն ալ հոն գիրք ու թերթեր
Խառնէր, վաղւան դաս կըսերտէր.
Երբեմն ալ իր աչքերն դէռասէր
Դուրս դարձնելով «վա՛շ-վա՛շ» կ'ասէր։

—

Եւ նայելով ձեան տարափին՝
«Որքա՜ն խեղճեր կըտառապին»՝
Կ'ասէր ինքնին, կըհառաչէր,
Լեցուէին իր գոհար աչեր։

—

Մէկ մ'ալ թռչունն, որ իր դիմաց
Սարսռող ծառին վրայ էր դիմած,
Ձունչէ մը վերջ երկար, արձակ,
Իրեն ուղղեց այս համարձակ.

—

«Աղջի՛կ ազնիւ, կո՛յս գեղընաիր,
Թոյլ տուր բերեմ քեզ մի խնդիր.

Ինձ յոյս կուտայ քո կերպարան,
Քովդ գտնելու պատրսպարան։

—

Երբ հնչէին ձայնէս դաշտեր,
Յիշե՞ս, հոգիդ ինձ հետ հաշտ էր.
Խնդրեմ, հիմա մ'ըլլար անգութ
Ինձ պէս խեղճին անբոյն, անկուտ։

—

Կ'անցնի ձմեռ այս անօրէն
Զւարթ գարուն կուգայ նորէն,
Ձոր, լեռ ու սար դարձեալ ծաղկին
Եւ կըցնծան երգով նախկին։

—

Ցայնժամ կ'երթամ— եթէ ներես,
Կարօտս առնել ընկերներէս,
Եւ պատմելու թէ իմ կեանքին
Ի'նչպէս խնայեց աղջիկ մ'անգին։

—

Կ'արժանանաս, աղջի՛կ անգին,
Ամենուն ալ գովասանքին.
Պիտի վարմունքդ սիրուն ա՛յնքան
Որ քեզ տեսնել պիտի ցանկան։

—

Կ'երդնում, շատ հեղ բարեկամներս
Բերել այս կողմ, դուրս կամ ներս,
Քեզ երգելու երգեր ընտիր.
Ո՜հ, մի՛ մերժեր խեղճիս խնդիր։

—

Խորշիկ մը լոկ, կամ մի վանդակ,
Հոգ չէ ըլլայ սև, անքանդակ—
Պուտիկ մը ջուր, փշուր մ'ալ հաց
Կրփրկեն իմ մարմինս հալած։

—

Այս ըոլորին ի փոխանակ
Ունիմ երգեր ու եղանակ.
Լոկ մէկ հրամանդ ինձ կըբաւէ,
Կ'երգեմ մինչև ըսես՝ բաւ է։

—

Հոգիդ սիրեմ, խնդրեմ փութա՛,
Աղջիկ մը անշուշտ չըլլար Յուդա,—
Մի՛ մատները գիս ցուրտի, սովին,
Արդէն սառած եմ կիսովին»։

—

Թութը ցնցեց աղջկան հոգին,
Արդէն ինք չէր մէկն անհոգին—
Պատուհանէն դայն նետս առաւ,
«Կեցցե՛ս»— ըսին մայր և պառաւ։

—

Տաք-տաք շունչով տաքցուց դանի,
Բոյն մը շինեց պարզ, դեղանի,
Մէջը դրաւ առաւօրէն
Ձագեր, կորեկ, քիչ մը ալ ցորեն։

—

Դրացի աղջկունք շատ հեղ գային
Լսել թռչնոյն ձայնն երկնային.
Տաճար դարձաւ տունն աղքատիկ,
Ամեն օր Ծնունդ էր կամ Զատիկ։

Ե. Թ. Գալայեան

ԱՂՋԻԿՆ ՈՒ ՎԱՐԴԵՐԸ

Ծննդեան պատմութիւն

Վին պատմութիւն է այս: Բայց դուք, երեխաներ, եթէ դեռ չէք լսել այս, այն ժամանակ ահա լսեցէք, ես կը պատմեմ ձեզ:

— Այդ պատահել է մեծ Թագաւորանիստ քաղաքում, Քրիստոսի Ծննդեան նաւակատիքին: Մի աղքատ աղջիկ, վատ հագնւած, բարակ հագուստով և դլխին բարակ թաշկինակ զցած՝ թափառում էր քաղաքի փողոցներում: Աղքատ զարդարանքը նրան ցրտից չէր պաշտպանում, դրա համար էլ նա ամբողջովին կապտել և դողդողում էր: Նրան փողոց էր քշել կարիքը. տունը ցուրտ էր: Նա սոված էր և տօնին դիմաւորելու ոչինչ չունէր, մայրը հիւանդ էր և տօներին ոչինչ չէր կարողացել աշխատել... Եւ ահա աղջիկը, որ գարնանը և ամառը փողոցներում ծաղիկներ էր վաճառում, որպէսզի իր քիչ աշխատանքով օգնէ մօրը — մտածեց փորձել՝ ծաղիկներով առևտուր անել և ձմեռը. նա յոյս ունէր, որ նախ քան տօնը ոչոք չէր մերժիլ ծաղիկները վերցնելու, որպէսզի նրանցով զարդարէ իր սենեակը աշխարհիս Փրկչի Ծննդեան տօնին: Փաղկեայ խանութի տէրը, որից նա միշտ ծաղիկներ էր վերցնում — սիրով նրան պարտքով տւեց մի-երկու տասնեակ թարմ, նոր կարած հոտաւէտ վարդերի մի փոքրիկ զամբիւղ:

Սակայն աղջիկը սխալւեց. տօնից առաջ բոլորը շտապեցին գնել, գործները վերջացնել, անհրաժեշտ պաշար և երեխաների համար ընծաներ պատրաստել, և ոչոք ուշադրութիւն չդարձրեց ոչ խեղճ աղջկայ և ոչ էլ նրա ծաղիկների վրայ:

Վրայ հասաւ գիշերը։ Փողոցներում վառւեցին լապտերները։ Տների լուսամուտներով փայլփլում էին վառւող տօնածառի պայծառ մոմերը... Իսկ խեղճ աղջիկը դեռ մի ծաղիկ չէր ծախել։ Յրտից արդէն բոլորովին վայտացել էր. նա դողում էր ամբողջ մարմնով և նրա ատամը ատամին չէր դիպչում։ Դրա վրայ աւելացրէք և այն, որ նա սարսափելի քաղցած էր. առաւօտից սկսած ոչինչ չէր կերել։ Նա կանգնեց մի տան լուսամուտի առաջ։ Լուսամուտի ետև, մեծ սենեակում՝ նա տեսաւ պայծառ վառւող տօնածառը, նրա շուրջը ուրախութիւնից ցատկոտում և աղաղակում էին զարդարուն երեխաները։ Աղջիկը լուսամուտի ապակու միջով լսում էր նրանց ուրախ աղաղակները, նւագարանի ձայնը, տեսնում էր խաղալիկները, կարմիր խնձորները, ընկոյզները, քաղցրեղէնները... Բայց յանկարծ նրա քունը տարաւ. նա կրկամենար այն րոպէին պառկել և քնել։ Ի դէպ, լուսամուտի մօտ դուռն բարձր սիւնն էր։ Աղջիկը քաշւեց այդ սիւնի ետև, այդտեղ քամին նրան չէր հասնում. նրա տեղը տաք էր. նրա աչքերը հուվի եկան։ Նա դլուխը յենեց սեան մեծ քարին և փակեց. նրա համար այժմ բոլորովին տաք էր և լաւ... Աղջիկը քնեց և այլևս չդդարթնեց... Նա մեռաւ։ Վարդերը ցրւեցին նրա ոտների տակ։

Բայց եթէ երկրիս վրայ ոչ ոք դործ չէ ունեցել խեղճ, մրսած և սոված աղջկայ հետ, այնուամենայնիւ Աստուած երկընքումն է, որ տեսնում է բոլորը, ինչ որ կատարւում է երկրիս վրայ. նա տեսաւ և՛ սառած փոքրիկ աղջկան և երբ նրա հոդին թռաւ սառած մարմնից, ՏԷր Աստուածը նրան դիմաւորելու ուղարկեց իր սուրբ հրեշտակներին, որոնք յափշտակեցին նրան և արագ սլացան դէպի երկնային բարձրութիւնները։ Այնտեղ արդէն վառւում էր երկնային փառաւոր տօնածառը՝ ամբողջովին լուսով հեղեղւած, անթիւ աստղերով վառւած։ Ոչ մի երեխայ դեռ այդպիսի տօնածառ չէ տեսել երկրիս վրայ։ Ինքը Քրիստոս դիմաւորեց խեղճ սառած աղջկայ հոդուն և նրան տարաւ դէպի երկնային փայլուն բնակարանները... Աստ-

ւածային նւագածութիւնն այնպէս քաղցր էր հնչում, այնպէս քաղցր էր հնչում, այնպէս հրաշալի էր... Հրեշտակները ճանապարհին ծաղիկներ էին ցրում և երգում.

«Ովսաննա՛, ովսաննա՛»:

Բայց ղրանով հրաշքը դեռ չէվերջացաւ:

Միւս օրը սառած աղջկայ փայտացած դունատ մարմինը մի տեղ տարան, իսկ դամբիւղից ցրւած վարդերը մնացին փողոցում ընկած: Այդ ժամանակ եկեղեցուց վերադառնում էին երեխաները. նրանցից իւրաքանչիւրը մի մի ծաղիկ ընտրեց և երևակայեցէ՛ք, երբ այդ թառամած վարդերը տուն տարան, նրանք կենդանացան, ծաղկեցին, իրանց քնքուշ հոտով բոլոր սենեակները լցրին, իսկ յետոյ ճոխ ծաղկող թփեր դարձան: Բացի ղրանից, ով որ այն վարդերից վերցրել էր, այդ ժամանակւանից սկսած դարձաւ հեզ, բարի, բոլորին՝ թէ մարդկանց և թէ կենդանիներին՝ խղճացող: Դուք և՛ այժմ կարող էք իմանալ, թէ ո՛ւմ մօտ է դտնւում այդպիսի մի վարդ: Եթէ դուք պատահում էք բարի և հեզ բնաւորութեամբ, լսող, ոչոքի չվիրաւորող, խղճացող և՛ աղքատ մարդուն, և՛ սոված շանն անգամ, և՛ անօգնական կատւին—այն ժամանակ այնպէս իմացէք, որ նրանց Հայրը կամ մայրը, երբ դեռ փոքր են եղել, Քրիստոսի Ծննդեան օրը եկեղեցուց դառնալով վերցրել էին խեղճ, Ծննդեան գիշերը սառած աղջկայ փողոցում ընկած վարդերից մէկը:

Մարտ. Պահրամեանց

Թելօֆ Գոճարիկը

ԾՈՎԱՅԻՆ ԱՐՔԱՅԻ ԹԱԳԸ

(Գուդճաքսոնից)

Այս բանը շատ վաղուց էր, շա՜տ վաղուց. մի քանի հազար տարի սրանից առաջ: Խոր ծովի յատակին, վառահեղ գահի վրայ նստած էր ծովային արքան և նրա բոլոր հպատակները զանազան ծովերից գալիս էին նրա մոտ, իրանց հաւատարիմ հպատակութեան զգացմունքներն արտայայտելու. ծովային առիւծները թաւալւում էին ծովերի ինքնակալի ոտների մօտ, կետերը լողում—գալիս էին իրանց հնազանդութիւնն յայտնելու, իսկ թռչող ձկներն իրանց թռուիչքներով հարթում էին արքայի ղէմքի կնճիռները: Եւ այս ամենը վայելվում էր ինքնակալի գահի մէջ, որը շինուած էր մաքուր բիւրեղից և զարդարուած ջրի միլիօնաւոր ցայտերով: Ծովային արքան հագած էր մի երկայն, ձկան նախշուն թեփերից պատրաստած հագուստ և ծովային վարդերից գործուած մի վերարկու, որի ծայրերը տարածուած էին ջրի մակերևոյթի վրայ, շատ ու շատ մղոններ հեռու: Արքան ձեռքին բռնած ունէր գայիսոնը, իսկ նրա գլխին կարմիր բուստից մի թագ կար և թէպէտ գահը ծովի յատակին էր դրած, այնուամենայնիւ արքայի վառահեղ ու հզօր կերպարանքը բարձրանում էր մինչև ջրի մակերևոյթը

և նրա թագը դուրս էր ցցել ու շրջապատած էր ծովաբոյսերով, որոնք իսկապէս ծովային արքայի երկար մազերն էին, որ տատանւում էին ալիքների վրայ:

Ծովային արքան բազմում էր գահի վրայ և դատում, դատաստան էր կտրում: Բայց այնտեղ, ներքևը, ծովի յատակին արդարատուէիւնը նոյն դանդաղ քայլերով էր առաջ գնում, ինչպէս և մեզ մօտ, երկրի վրայ, և ծովային արքան վճիռ կտրելով, բազմաթիւ դարեր իր գահից չէր բարձրանում, տեղից չէր շարժւում: Բայց վերջապէս նա այնքան յոգնեց, որ վերջապէս որոշեց Հանգիստ տալ իրան: Նա մի կողմ դրեց գայիսոնը և թագը վայր առաւ գլխից: Բայց ինչ զարմանալի տեսարան բացւեց արքայի աչքերի առաջ... Ո՛րպիսի հրաշք էր կատարւել: Կարմիր բուստերը ծածկւել էին սև հողով, իսկ նրա վրայ բուսել էին անտառներ, բարձրացել լեռներ, զարդարւել հովիտներ, կանաչել մարգագետիններ. ջրքոտանի կենդանիները կենդանացնում էին անտառները, հովիտներում բնակութիւն էին հաստատել մարդիկ... Որքա՜ն սքանչելի էր երևում այս ամենը ծովային արքային, որքա՜ն կեանք ու գեղեցկութիւն կար այդ բոլորի մէջ: Եւ ծովային արքան ուրախութիւնից ձեռքերն իրար կցեց—նա այսպիսի բան երբէ՛ք տեսած չէր և չէր կարող աչքերը հեռացնել այդ հրաշալի տեսարանից:

Բայց կարճ ժամանակից յետոյ—հաւանականաբար մի քանի տարի էր անցել, որը ծովային արքայի համար մի կարճ միջոց էր—նա սարսափահար նկատեց, որ հրապուրիչ տեսարանը չքանում է. շուտով կեանքն ընդհատւեց թագի վրայ, երևում էին միայն լերկ ժայռեր և սպիտակին էին տալիս ծովային խոտերով պատած կմախքներ:

Այն ժամանակ արքան տխրեց:

—Ա՛խ, որքա՜ն գեղեցիկ էր այդ տեսարանը... Ինչո՞ւ ես չըկարողացայ պահպանել այն:

Եւ ահա՛ ծովային արքան կանչեց իր բոլոր պալատականներին և աշխատանքի ընդունակ բոլոր հպատակներին և հրա-

մայեց մի այնպիսի սիւն շինել, որը հասնէր մինչեւ ջրի մակերևոյթը: Իսկոյն գործի եղան և երբ սիւնը պատրաստ էր, արքան ոսկով ու աղամանդներով զարդարեց իր թագը և ամրացրեց նրա վրայ:

Հազար տարին մի անգամ միայն ծովային թագաւորն իրաւունք ունի ջրի մակերևոյթից դուրս հանել իր գլուխը և դիտել արեգակի մուտքը: Սակայն մինչեւ այժմ դեռ ոչ մի անգամ նա չէր օգտւել իր այդ իրաւունքից. «ոչ մի բան,— մտածում էր նա —չի կարող իմ թագաւորութիւնից գեղեցիկ լինել»: Իսկ այժմ նա սպասում էր անբացատրելի անհամբերութեամբ, սպասում էր այն ժամին, երբ ինքը պէտք է ուրախանար իր ստեղծագործութիւնը տեսնելով: Նա հարկաւրաւած էր համարեա մի ամբողջ հազարամեակ սպասելու. սակայն ծովային արքայի համար դա այնքան էլ երկար միջոց չէր—և սպասած օրը վերջապէս հասաւ: Ուրախութեամբ լցւած, թագաւորը վեր առաւ իր հետ տաւիղը՝ իր ստեղծագործութեան առաջ ցնծութեան հիմնը երգելու համար և արքայական գլուխը ջրի մակերևոյթից վերև բարձրացրեց: Նրան թւում էր, թէ թագն այժմ աւելի գեղեցիկ, աւելի մարգարտաշատ և լուսափայլ էր, քան առաջին անգամ: Մեծամեծ նաւերը յետ ու առաջ էին անում ալիքների վրայ, հարուստ քաղաքները զեղեցկասլէս սիրւած էին ծովափին: Սակայն այդ քաղաքների, շէնների և զիւղերի միջից մի ինչ որ օտարոտի աղմուկ, դղրդիւն էր լսւում, որը վախեցրեց արքային և երբ նա մօտեցաւ թագին, տեսաւ, որ մարդիկ կոտորում են միմեանց այն ոսկու համար, որով նա զարդարել էր այն: Եղբայրը եղբօր դէմ էր բարձրացել, որդին —հօր, լսւում էին անէծքի աղաղակներ, մեռնողների հառաչներ... Ամեն կողմ վիշտ, անսահման թշուառութիւններ էին տիրում,— և այս ամենը այդ ոսկու համար: Այն ժամանակ զայրացած արքան տաւիղն այնպիսի սաստկութեամբ խփեց թագին, որ մի քանի նաւեր ժայռոտ ափին զարնւեցան, արքայի բարկութիւնից կրակ զարձած շունչն ալեկոծեց ծովը և սա

սկսեց մոնչել թագի շուրջը. ալիքները վայրենի շաչիւնով դիպչում էին եզերքին... Իսկ արքան երկու ձեռքով բռնեց սիւնը և սկսեց շարժել այն, որ ծովի անդունդն իջեցնէ իր թագը: Բայց սիւնը շատ պինդ, անսասան կանգնած էր—միայն մի քանի քաղաք կործանուեց երկրաշարժից և մի քանի հազար մարդ կոտորուեց... Բայց ինչ նշանակութիւն ունէին այս մի բուռ մարդիկ: Կենդանի մնացածներն յարձակուեցան նոր աւարը—մեռածների գոյքի վրայ և խռովութիւնն աւելի մեծացաւ...

Այն ժամանակ ծովային արքան դառնապէս լաց եղաւ և վշտալի սրտով իջաւ դէպի իր ջրային թագաւորութիւնը, չափազանց զղջալով, որ իր թագը զարդարել էր ոսկով և ադամանդներով:

Ծովի. Աւետաբեանց

ԳՈՒՏԵՆԲԵՐԳ

III

պագրութեան գործի ստեղծումն առաջին տարիներուն իսկ՝ զարմանալի էր և անսովոր արագութեամբ տարածուեց Եւրոպայում: Գեռ Գուտենբերգի կենդանի ժամանակ տպարաններ բացուեցան Ստրասբուրգ, Կեվլն և Հարլեմ: 1464 թուին տպագրութիւնն անցաւ Իտալիա. 1470-ին Ֆրանսիա, իսկ Հռոմի մօտ Սուբբիակո վանքում 1466-ին լոյս տեսաւ առաջին իտալական հրատարակութիւնը: 1468-ին տպարանը փոխադրուեց Հռոմ: Իտալիան այն ժամանակ կրթութեամբ անհամեմատ շատ աւելի բարձր էր կանգնած քան ամբողջ Եւրոպան. և՞ Իտալիայի շնորհքին է պարտական Եւրոպան, որ նոր արուեստը ծաղկեց և տարածուեց: Պապերը և հոգևորականութիւնը մեծ ոգևորութեամբ վերաբերուեցին դէպի նոր արուեստը: Հռոմից տպագրուած գրքերը սփռուեցին արևմտեան Եւրոպայում. 1470-ից մինչև 1500 թիւը միայն Հռոմում տպագրուեցան 5400 տեսակ գիրք:

Եւրոպայում տպագրութիւնը տարածուեց հետևեալ ժամանակագրական կարգով. 1440 թուին Գուտենբերգն արաւ իր առաջին տպագրական փորձերը, 1455-ին լոյս տեսաւ առա-

ջին տպագրած գիրքը. 1464 թ-ին տպագրութիւնը երևաց Իտալիայում, 1470-ին Ֆրանսիայում, 1473-ին Նիւրնբերգում և Հոլանդիայում, 1474-ին Իսպանիայում, 1477-ին Անգլիայում, 1481-ին Լէյպցիգում, 1484-ին Դանիմարքայում, 1483-ին Չեզիայում. 1478 Չեխիայում, 1484-ին Պորտուգալիայում, 1491-ին Լեհաստանի Կրակովում, 1494-ին Շերնոգորիայում, 1492-ին Աւստրիայում, 1525-ին Վիլնոյում, 1564-ին Մոսկւայում, 1567-ին Վենետիկում հայերէն. 1640 -ին Հիւսիսային Ամերիկայում:

Գեղեցիկ տպագրութեամբ յայտնի էր այն ժամանակ Վենետիկի Ալդ Մանուցիի տպարանը. տպարանատէրերը մինչև ժամանակ և գրավաճառներ էին: Գրքերը սովորաբար տպում էին երեք հարիւր օրինակ. առաջ ամբողջ թերթը մի երես էր կազմում, յետոյ ծալեցին չորսի, ապա և 1500 թ-ին 12-ի: Շատ շուտով նոր կանոնադրութիւն դուրս եկաւ գրքերի գնի ու բովանդակութեան վերաբերեալ. Պարիզի համալսարանը գրքերի ոսկագին նշանակեց և կառավարութեան ու հոգևորականութեան կողմից հսկում էր նրանց բովանդակութեան վրայ: Գերմանիայի Մաքսիմիլեան կայսեր և Ֆրանսիայում Լուդովիկոս արքայի հիմնած վոստը օժանդակ եղաւ գրքերի արագ տարածման:

Մինչև 1500 թ-ը լոյս տեսան՝

Վենետիկում	2835	տեսակ	գիրք.
Միլանում	625	«	»
Բոլոնիայում	298	«	»
Հռոմում	929	«	»
Պարիզում	751	«	»
Լոնդոնում	130	«	»

Ուրեմն լուսաւորութեան կողմից առաջին տեղն էր բռնում Իտալիան և Վենետիկն էր տպագրական գործում առաջին քաղաքը ամբողջ Եւրոպայում: 1563 թ-ին նոյն Վենետիկում լոյս տեսաւ և առաջին լրագիրը, որ կոչւեց Գազէթ.

այդ լրագրի թերթը ծախւում էր իտալական երկու կոպեկանոցի արժողութեամբ մի դրամով, որի անունն է Գազէթ. այդ դրամի անունն անցաւ և լրագրին. 1631-ին լրագրութիւնն սկսւեց Ֆրանսիայում. 1588-ին Անգլիայում. դրանց օրինակները մինչև հիմա պահւում են Լոնդոնի թանգարանում:

Գերմանիայի Ախէն քաղաքում կայ ամբողջ աշխարհի լրագիրների թանգարան. այստեղ ժողոված է մինչև 40,000 տեսակ զանազան լեզուներով լրագիրներ:

IV

Տպագրութիւնն ունեցաւ բազմակողմանի դրական կիրառութիւն. նրա շնորհիւ ուրիշ արւեստներ ևս, որոնք առնչութիւն ունէին իր հետ՝ յոյժ զարգացան. գրավաճառութիւնը, լրագրութիւնը, կազմարարութիւնը, գոյների պատրաստութիւնը, մեքենական արտադրութիւնը, փորագրութիւնը փայտի, պղնձի, պողպատի վրայ, վիմագրութիւնը, ցինկոգրաֆիան, ֆոտոտիպիան և այլն և այլն:

Տպագրական մամուլները սկզբում փայտեայ էին. XIX դարի սկզբում երկաթէ մամուլներ շինւեցան, 1790 թւին անգլացի Նիկոլսոնը հրատարակեց արագատիպ մամուլ շինելու ծրագիրը, որ իրականութիւն չըստացաւ: 1812 թ. գերմանացի Կենիգը և Բաուէրը հնարեցին արագատիպ մեքենայ Լոնդոնում. 1814 թւի նոյեմբերի 29-ին առաջին անգամ Times լոյս տեսաւ այդպիսի երկու մեքենայի վրայ, որոնք մի ժամում տպում էին իւրաքանչիւրը 15000 օրինակ: Արագատիպի անիւը պտտում էին մարդիկ. նոյն 1814 թւին առաջին անգամ լիշեայ Times լրագիրը տպւեց շոգեմեքենայով: Սակայն այժմ կայ շոգեմեքենայ, որ մի ժամում պտտում է 32 մեծ երեսանոց 90,000 մի ժամում՛՛՛՛: Ամենավառ երևակայութիւնն անգամ չի կարող երևակայել, որ 25 թերթը տպւի մի վայրկեանում կամ 1500 թերթը մի րոպէում: Այդքան տպւած թերթի երկարութիւնը հաւասար է 84 վերստի, որ պտտւում է մի ժամում. ահա ինչ հանճար է տւել Աստւած

մարդուն: Տպարանի հատ կապւած է և տառերի ձուլարանը. տառերը շինւում են մի փութ արճիճի, մի գրանքայ անակի և 12 ֆունտ սիւրմայի խառնուրդից: Մի վարպետը կարող է օրական ձուլել մինչև 20,000 տառ: Բոլոր տառերի բարձրութիւնն է կէս վերշոկ:

Եւրոպայում կան շոգեմեքենայ-ձուլարաններ, ուր միայն մի բանուորի օգնութեամբ դուրս են գալիս խոպառ պատրաստ տառեր: Տառերի փութը ծախւում է 23-ից մինչև 25 րուբլի: Մէջին տեսակի տառերից մի փթում լինում է 20-ից մինչև 25 հազար տառ: Ամենաշատ գործածւող տառերն են ա, ե, ի, ն, ր, և այլն ու ինչպէս փորձը ցոյց է տւել՝ համաձայն նրան էլ մի տառից ձուլւում է շատ, միւսից քիչ: Պետերբուրգի մեծ տպարաններն ունին մինչև 3000 փութ միայն տառ. մի տառը դիմանում է կէս միլիոն անգամ տպւելուն. այնուհետև դա փչացած է համարւում և ծախւում է փութը 4 ր.:

Տպագրական գործում մեծ կարևորութիւն ունեցող յառաջադիմութիւն է համարւում ստէրօտիպիան, որ հնարեց Վիլիամ Գեդը Էդինբուրգում 1729 թւին: Աստւածաշունչը, կլասիկ գրքերը, դատագրքերը շարունակ տպւում են, ամեն անգամ նորից չշարելու համար. արդէն մի անգամ շարւածից կաղապարը հանում են հատ կակուղ կարտօնի մէջ, որ չորացնելով՝ նրանում ձուլում են ամբողջ շարւածքի երեսները տախտակ-տախտակ, որոնց մի անգամ տպելուց յետոյ կարելի է դարսել ու պահել յաջորդ հրատարակութիւնների համար: Արդ մեծ լրագիրները, որոնք հարիւր հազարաւոր օրինակներ են տպւում, իւրաքանչիւր գիշեր՝ մի հատ շարւած օրինակից հանում են մի քանի հատ ստերէօտիպի օրինակներ և անվերջ թղթի վրայով մի ժամում տպում է մինչև մի միլիոն օրինակ և վաղ առաւօտեան հասցնում ահագին օրաթերթեր:

Տպագրական մուրը պատրաստւում է 12 մաս վուշի սերմի ձէթից, 6 մաս կանիֆոլիից, 7 մաս ձանձախաբիթից և

$^1/_3$ մաս բելլինեան փայլուն տեղից: Ձանձախարիթը ստանալու համար այրում են սև նաւթ, կուպր և այլն ու նրանց ծուխը թողնում են սենեակների մէջ, ուր նրանք պատերին դիպչելով՝ գոյացնում են ձանձախարիթ: Ամենալաւ գործարանը տարեկան պատրաստում է 5000 փութ տպագրական ներկ կամ մուր: Ամենաէժան մուրը, որ մայրաքաղաքներում գործ են ածում աֆիշ տպելու համար՝ արժէ 7 ր. փութը: Լրագրական մուրը՝ 9—11 ր., գրքեր տպելունը 16—20 ր., պատկերազարդ հրատարակութիւններինը՝ 25—60 ր.:

Տպագրական գործում մեծ նշանակութիւն ունին գրաշարները. նրանք ամբողջ օրը կանգնած են լինում. լաւ գրաշարը մի ժամում հազար տառ կըշարէ կամ մի օրում 10 ժամ բանելով՝ 10,000 տառ. դրանով նրա աջ ձեռը օրական տասը վերստ յետ ու առաջ է անում: Պետերբուրգում կայ երեք հազար գրաշար, իւրաքանչիւր տպարանում 20—100 գրաշար: Գրաշարական գործն առողջութիւնը մաշող է, ուստի պէտք է խիստ առողջապահական միջոցներ գործ դնել: Ձարւածքը նայում է սրբագրողը, որ սխալները հանելու համար գործ է ածում քսան տեսակ նշաններ. սրբագրողը նայում է ոչ միայն տառասխալներին, այլ և ուշադրութիւն է դարձնում մտքերին. բովանդակութեան երբեմն նայում է նաև ինքը հեղինակը:

Եւրոպայի մի քանի տպարանները համաշխարհային հռչակ են վայելում. օրինակ Բրոկհաուզի տպարանը Լէյպցիգում, Վիեննայի պետական տպարանը, Պետերբուրգի դիտութեան ճեմարանինը և այլն: Բրոկհաուզը գիշեր-ցերեկ անդադրում տպում է ամեն լեզուներով. այստեղ են տպւում գլխաւորապէս յոյն և հռոմէացոց կլասիկները. մինչև անգամ մահմեդականն իր Ղուրանը առնում է Բրոկհաուզի հրատարակածը, վասն զի նա է էժանը և ճիշտը: Մօտերս Լոնդոնում մի գիրք է դուրս եկել, որի մէջ «Հայր մերը» տպւած է երեք հարիւր լեզուներով, սակայն նոյն աղօթքը կայ և Թուսաստանում 356 լեզուով տպած: Պետերբուրգի կայսերական ճեմարանն ունի

արևելեան բոլոր լեզուների տառերը. նա 5000 փուլթ տառ ունի:

Զատ նշանաւոր է Պետերբուրգում պետական արժեթղթեր պատրաստելու տպարանը. նա մի ամբողջ քաղաք է. ճակատի երկարութիւնն է կէս վերստ. ունի 25 ահագին կորպուս մեքանաճ ուրիշ մանր շինութիւններով, սրահներով, բազերով, փոքրիկ ծառաստաններով: Ոչ մի բան՝ մեքենայ, ներկ, թուղթ և այլն դրսից չէ գալիս այստեղ. ամեն բան շինւում է իր մէջ օրինակելի կերպով և խիստ դաղտնի. ունի սեպհական արտեզեան ջրհոր և մի ժամում գործ է ածում 30 հազար դոյլ ջուր: Այդտեղ պատրաստւում է օրական երկու հարիւր միլիօն թերթ: Այդտեղ ամեն օր բանում է չորս հարիւր մեքենայ. մեայն 800 կին և աղջիկ կայ՝ տպած դրամաթղթերը չոկելու և դարսելու համար: Վեննայի պետական տպարանը տարեկան գործ է ածում 200 հազար օդմա թուղթ, ունի 21 փուլթ տառ:

Հայկական ամենաերևելի և ամենահին տպարանն է Վենետիկի Մխիթարեան միաբանութեան Ս. Ղազար վանքինը, որ հիմնել է 1717 թուին. ուրիշ ոչ մի տպարան դրա չափ հայերէն գիրք լոյս ընծայած չէ. նրա հրատարակած հայերէն գրքերի տեսակի թիւը հազարից աւելի է. Ս. Էջմիածնում տպածը հարիւրից պակաս է:

Ն. ար. Տէր-Աւետիսեան



ՉԱՔՈՒԿԸ

Մայրը յայտնեց երեխաներին. այսօր պապը գալու է մեզ մօտ. ուրեմն մենք ընտանեկան տօն կունենանք և դուք բոլորեքեանդ պիտի զուգուէք և որքան կարելի է, ձեզ լաւ պահէք: Գուք գիտէք, որ պապը սիրում է երբ երեխաներն իրանց լաւ են պահում, մաքուր ու կանոնաւոր են հագնւած. ուրեմն յիշեցէք և պահպանեցէք ձեր շորերը: Թանգագին, բայց կեղտոտ շորերը, անհամեմատ վատ են հասարակ և մաքուր շորերից:

Երեխաներն ուրախութիւնից թռչկոտացին, որ տեսնելու էին պապին: Բարի և քաղցր ծերունու գալուստը նրանց ուրախացնում էր, որովհետև նա գիտէր զւարճալի խաղեր սարքել. մի խօսքով նրանք յոյս ունէին այդ օրը որքան կարելի է լաւ անցկացնել: Մանաւանդ ուրախ էր փոքրիկ Աստղիկը:

—Կըհագնեմ նոր վարդագոյն վերնազգեստ—ասում էր նա ծափահարելով—այնպէս սիրուն է նա իր մեծ մեծ ժապաւէններով, ախր...

—Տես, չըլինի միանգամից կեղտոտացնես—նկատեց նրան մեծ քոյր Մարիամը. քո կեղտոտութիւնը յայտնի է բոլորին էլ:

—Ներեցէք խնդրեմ, եթէ ուզենամ՝ քեզանից լաւ կը-

պահեմ. յիշում եմ թէ մի անգամ ինչպէս կեղտոտացրիր կապտագոյն շորերդ, մաքրել անգամ չէր լինում:

—Մարիամը չըգիտէր, որ տները իւղաներկով նորից ներկած էին—պաշտպանեցին եղբայրները սիրելի քոյրիկին—իսկ դու յայտնի կեղտոտն ես, մայրիկը միշտ ասում է թէ ով իրան միշտ չի սովորեցնում մաքրասիրութեան, նա երբէք չի կարող, եթէ ուզենայ էլ, իր շորերը մաքուր պահել:

—Իրրև թէ դուք լաւ էք—կոչեց Աստղիկը—դուք ինձնից լաւ չէք, բայց ինձ նկատողութիւն էլ էք անում:

—Դու էլ մի նախատիր Մարիամին:

Աստղիկն ամենից առաջ վազեց մանկանոց, իր գեղեցիկ վերնազգեստը շուտով հագնելու:

Զուգած և անդադար ինքն իրան նայելով, մանաւանդ ժապաւէնը, որ այնպէս գեղեցիկ սարքել էր մայրը, նա ինքնահաւան մանէր գալիս պարտիզի գլխաւոր ճանապարհի մէջ տեղով, որ չըլինի թէ վերնազգեստը պատուի մացառներից, կամ կեղտոտացնի խոտի մէջ իր նոր կօշիկները:

Եղբայրները հրում էին միմեանց, աչքերով ցոյց տալիս Աստղիկին և ծաղրում նրա ինքնահաւանութիւնն ու զգուշութիւնը:

Այսպէս ծաղրածու էին երեխաները:

Աստղիկը նրանց վրայ ուշադրութիւն չէր դարձնում և շարունակում էր ճանապարհով մանգալ:

Տղաները վազեցին գնդակ խաղալու, Մարիամն էլ գնաց մօրն օգնելու, իսկ Աստղիկը մնաց մենակ: Նա մի քիչ տխրեց, բայց ինչ արած, վախենում էր խաղալ: Անտուղր լինելուց դուրս պատուէր, կամ կեղտոտացնէր շորը: Նա դրում է, որ եղբայրները ճշմարիտ են—թէ նա խաղի մէջ եթէ տաքանում է, ամեն բան մոռանում է և պատրաստ է ծանծաղուտի մէջ նստել. իսկի այնումն էլ չի գցում:

—Օ՛խ, ինչ երկար է օրը, երանի թէ պապը շուտ գար, ներան մի մաքուր երեսայի, իսկ յետոյ կարելի էր խաղալ: Նա զգոյշ կըխաղայ, գուցէ և չըկեղտոտացնէ Հանդերձը:

Աստղիկի մտածմունքները յանկարծ ընդհատեցին, երբ պարտիզում երեսաց Հաւն իր ճուտերով:

—Այս Հաւերն այնքան չիմար են, որ միշտ Հէնց այնտեղ են յայտնուում, ուր նրանց մատքը արգելած է. պէտք է նրանց դուրս անել:

Աստղիկը վազեց նրանց յետևից. ճուտերը փախան մտան թփերի ու ծաղիկների մէջ. Հաւը կրկռաց, այս ու այն կողմն ընկաւ, բայց չըկարողացաւ նրանց Հաւաքել:

Աստղիկը ճիպոտը վերցրեց և նրանց յետևից ընկաւ. մոռացաւ պապին էլ, իր նոր Հանդերձն էլ:

Վերջապէս նրան աջողուեց ճուտերին միասին Հաւաքել և դէպի Հաւանոց քշել: Նա այնքան յափշտակուեց այս գործով, որ վերջին ճուտին ներս քշելիս, ինքն էլ վազեց Հաւաբուն, լպաւ դուռը բաց պահող փայտերին, դուռն էլ նրա յետևից փակուեց:

Մնալով մթութեան մէջ, Աստղիկն ուշքի եկաւ և Հանգիստ թողնելով ճուտերին, վազեց դէպի դուռը, որ բացանի շուտով. բայց այստեղ էլ յիշեց, որ դուռը դրսից է բացուում, իսկ ներսից բանալ անկարելի է: Նա սկսեց թխկթխկացնել, գոչել, բայց բոլորն ի զուր—ոչ ոք չէր կարող նրան լսել. որովհետև Հաւանոցը Հեռու էր տնից:

Նա պիտի Հանգիստ սպասէր, մինչև որ մէկը մօտենար. բայց Աստղիկն ուզում էր որ իր ցանկութիւնը Հէնց իսկոյն կատարուէր և սկսեց թխկթխկացնել, գոռալ, ընկնել դէս ու դէն, վերջապէս սկըՀաց վայր ընկաւ և ամբողջապէս աղտոտուեց:

Երբ պապն եկաւ, ուրախութեան սկզբում մոռացան Աստղիկին. և տեսնելով, որ նա չըկայ, բոլորեքեան գնացին փնտռելու և դտան սարսափելի դրութեան մէջ:

Հանդերձն ու կօշիկներն այնպէս կեղտոտ էին, որ ստիպ-ւած էր ոչ թէ գլխից մինչև ոտը փոխել, այլև լացւել ու օճառով մաքրւել։

Այդ այնքան երկար տևեց, որ բոլորն էլ կարողացան նախաճաշել, կուշտ խաղալ, իսկ պապը տրամադրւած էր և մէկը միւսից աւելի զարհալի խաղեր էր հնարում։

Խեղճ Աստղիկ։

Թարգմանեցին **Օր. Օ. Մղդեսեաց եւ Խաւոյ**

ՓՈՓՐԻԿ ԲԱՐԵՐԱՐՈՒՀԻ

—

Ձմեռւայ գիշեր է։ Ամբողջ երկինքը պատած է ամպերով։ Ձեն երևում պայծառ աստղեր, թէկուզ մի կապոյտ բիծ էլ բաց երկնքում։ Ամենայն տեղ ամպեր են, մռայլ ամպեր։ Յուրտ քամին ադերսալի կերպով երգում է իր տխուր միատեսակ երգը... Ձիւնը խոշոր փաթիլներով վայր է ընկնում գետնի վրայ, ծածկելով նրան փափուկ գորգով և հաղցնելով մերկ ծառերին սպիտակ հագուստ։ Ձուտով կէս գիշեր կըլինի... Քաղաքի կէսն արդէն քնած է...

Փողոցները—որոնք աղմկալի են ցերեկը, այժմ լուռ են և դատարկ։

Մի ոչ այնքան մեծ սենեակում, երեք յարկանի շքեղ տան մէջ Հանդարտ է և տաք։ Պատուհանները ծածկւած են կապոյտ չթեայ վարագոյրներով։ Անկիւնում սուրբ պատկերների առաջ, հալիւ այրւում է կանթեղը և իր ազօտ փայլով լուսաւորում է պառաւ դայեակին, որը քաղցր նիրհում է աթո-

— Մի՛ ամաչիր, բալիկս, վերցրո՛ւ բախտը եւ շնորհաւորիր Նոր-Տարին.

ռի վրայ, ուր տարեկան Լենայի անկողնակալի մօտ։ Պայեակի գործը, դուլպան, վայր է ընկել ձեռքիցը յատակի վրայ։ Լենայի քունը չի տանում։ Նրա գեղեցիկ փոքրիկ ղէմքը և ոսկեգոյն խիտ գանդուրներով պատած սպիտակ ճակատը տըրտում են և խորասուզած մտքերի մէջ... Նրա գլխից դուրս չէ գալիս պատուած և ցրտից կապտած տղան, որին տեսել էր այնօր առաւօտեան Հայրիկի ու մայրիկի հետ եկեղեցուց տուն վերադառնալիս։ Այն տղան երկար վազեց կառքի ետևից և շարունակ խնդրում էր մի կոպէկ։ Հայրիկը բղաւեց նրա վրայ և անւանեց ärbakter, բայց նա շարունակում էր մեկնած ձեռքով վազելը։ Այն ժամանակ անխիղճ կառապան Վասիլին, պինդ մտրակեց տղային։ Տղան թռաւ կառքի մօտից, կանգնեց քիչ հեռու և դառն կերպով սկսեց լաց լինել։ Լենան մտաբերեց, ինչպէս լաց էր լինում տղան և ինքն էլ լաց եղաւ։

—Այս ինչ է, դեռ դու քնած չես, իմ սիրելիս,—սրթափւելով նիրհելուց ասաց պառաւ դայեակը և դգւանքով նայեց աղջկան իր անվերջ բարի աչքերով։

—Դա ինչ է, կարծես թէ լաց ես լինում, սիրելի փոքրիկս,—շարունակում էր նա, նկատելով Լենայի արտասուքը,—բաւական է, մանկիկս! Այդ տարիքում ինչի համար պէտք է լաց լինես։ Չէ՞ որ դու, փառք Աստծոյ, ապրում ես տաք տեղ, բաւականութեան մէջ... Հայրիկը և մայրիկը սիրում են քեզ—չարաճճուդ, ամենայն ցանկութիւնդ կատարում են... էլ ինչ է հարկաւոր քեզ։

—«Պայեակս, ես խղճում եմ տղային»...

—Այդ ո՞ր տղային։

—«Նրան, որին Վասիլին խփեց մտրակով... Ես քեզ արդէն ասել եմ նրա մասին... Եւ ինչիցն է այդ, դայեակս, որ ոմանք ապրում են հարուստ, իսկ ոմանք էլ ոչ ուտելու և ոչ խմելու բան ունեն, նրանք խեղճ և հալածւած, ստիպւած են ողորմութիւն խնդրելու և յանդիմանութիւններ լսելու։ Ասա ինձ խնդրեմ, դայեակս, ինչիցն է այդ, ինչիցն է»։

—Աստուած գիտէ, աղաւնեակս... Հաստատը ես չեմ կարող ասել ինչից է... շատերը —տեսնում ես — ողորմութիւն են խընդրում ծուլութիւնից... չեն ուզ մ աշխատել:

—«Բայց ինչքան էլ լինի, դայեակս, բոլորն էլ իս ծուլութիւնից չեն խնդրում»:

—Ի հարկէ, հոգեակս, ոչ բոլորը: Ճանաչում եմ ես մի տղայ, անունը Միտեա, որ շատ լաւ տղայ է, հանդարտ, համեստ և աշխատասէր ոչ իր տարիքին համեմատ: Նա կամ զամբիւղներ է հիւսում, կամ թզթից արկղիկներ և փայտից զանազան տեսակի խաղալիկներ շինում և այդ ամենը տանում է շուկայ ծախելու: Եթէ գնող լինում է՝ մի քանի կոպէկ աշխատում է, եթէ ոչ, առանց կոպէկի տուն է գալիս: Իսկ տանն ունի հիւանդ մայր: Ահա արդէն տարի և կէս կըլինի, որ նա անկողնուց չէ վեր կենում: Չէ կարող իս իր հարազատ մօրը թողնել... Հարկաւոր է նրան կերակրել, ծառայել, հագցնել: Յետոյ ինքն էլ պէտք է կերակրուի, հագնուի,—բայց հարցնում եմ՝ ինչո՞վ, ինչ միջոցով: Զուկայում զամբիւղներից աշխատած փողը ուտեստին չէ բաւականանում, բան ո՞ւր մնաց հագնելը: Եւ ահա խեղճ Միտեան տօն օրերին գնում է ողորմութիւն խնդրելու:

—«Եւ տալիս են նրան, դայեակս»:

—Այդպիսիներին մեղք է չըտալը, մանկիկս: Ի հարկէ, տալիս են, միայն նրանք, որոնց յայտնի է նեղութիւնը, որոնք դառն օրեր են քաշել և ով գիտէ ինչ է քաղցած լինելը:

—«Աբա ո՞րտեղ է այդ Միտեան ապրում»:

—Այս տեղից այնքան էլ հեռու չէ...

—«Մեր տնից»:

—Այո՛, այո՛, սիրելիս:

—«Գիտե՞ս ինչ, դայեակս, մի քիչ լռելուց յետոյ դիմեց Լենան պառաւին:

—Ինչ է, իմ սիրելիս:

—«Ես կըխնդրեմ հայրիկից, որ օգնէ Միտեային... Հայ-

ըիկը բարի է և կ'օգնէ։ Կըխնդրեմ որ եթէ ցանկանայ ինձ համար խաղալիկներ գնելու, Միտեայից գնի»։

—Խնդրիր, խնդրիր։ Միտեան շատ կուրախանայ, էլ ցուրտ օրերին դողալով չի գնալ շուկայ... Իսկ հիմա քնիր, սիրելիս... Աստած քեզ հետ!

Դայեակը ջերմեռանդութեամբ խաչակնքեց Լենային իր դողացող ձեռքով, համբուրեց նրա վափուկ թշիկը և բարձրացնելով յատակից գուլպան, դանդաղ քայլերով մօտեցաւ իր անկողնակալին...

—

Պատուհանների սառցով նախշուած ապակիների միջով, վազաքշանքով նայում է պայծառ արևը և ցոլացնում իր տաք հառագայթները, նոր զարթած Լենայի վարդագոյն դէմքի վրայ։ Դայեակը վաղուց է թողել իր անկողինը և աթոռի վրայ նստած գուլպայ է գործում։

—«Դայեակս, սիրելի դայեակս, —դիմեց Լենան պառաւին»։

—Ա... ա... ա... զարթնե՞լ ես, իմ սիրելիս,—թողնելով գործը ասաց դայեակը և բարձրացաւ նստած տեղից։—Այսօր դու շատ ես քնել,—շարունակում էր նա։—Հագուստդ տամ թէ ինչ։

—«Տուր, դայեակս!»

—Այս րոպէիս, աղաւնեակս։ Ես քեզ համար լուացելու ջուր էլ եմ պատրաստել։

—«Լաւ։ Հայրիկը վե՞ր է կացել»։

—Ի հարկէ, վաղուց է վերկացել!... Նա քեզ պէս ուշ չէ վերկենում։ Բայց ինչի համար ես ուզում իմանալ այդ։

—«Ես նրան Միտեայի մասին պիտի պատմեմ»։

—Դեռ չե՞ս մոռացել,—ժպտած պառաւը,—խելօք ես, խելօք... Հոգատար աղջիկ ես! Միայն, իմ փոքրիկս, այդ յետոյ կըպատմես... փառք Աստծոյ, օր շատ կայ! Առաջ միասին թէյ կըխմենք։ Ես քեզ համար մորիլի քաղցրաւենիք եմ բերել, որը դու սիրում ես։

—«Ձնորհակալ եմ, դայեակս։ Հայրիկը խօ ուրիշ տեղ չի գնալու»...

—Ո՞րտեղ պէտք է գնայ։ Երկուշաբթի օրերը—դու այդ նկատիր—նա չի գնում ծառայութեան... նոյնպէս և ուրբաթ օրերը... Դէ, շուտ արա, հագնիր... Ձատ խօսեցի քեզ հետ... Գնամ հեշտաեռը բերեմ։

Դայեակը գնաց։ Լենան ցատկեց անկողնակալից գորգի վրայ, հագնեց և սկսեց լացել։

—«Ի՜նչպէս բախտաւոր եմ ես,—մտածում էր նա, սրսկելով երեսը սառը ջրով,—իմ սենեակս մաքուր է, տաք է... Ինձ ծառայում են, սիրում են. ինձ համար գեղեցիկ հագուստներ են կարում. խաղալիկներ են գնում... Բայց Միտեան... խեղճ Միտեա! Ոչ ոք նրա մասին չէ հոգում։ Մի մայր ունի, նա էլ հիւանդ, անկողնուց չի վերկենում»! Նրա սիրտը ճմռթվեց խղճալուց ու արտասուքը սկսեց կաթել նրա Հիանալի կապոյտ աչերից...

—«Այսօր գնամ դայեակիս հետ նրան այցելեմ։—Ինչպէս է նա այնտեղ ապրում,—մտածում էր նա. մի բան էլ տանեմ հետս, քաղցրաւենիք, թէ ինչ... Թող ուրախանայ!»

Լենան լացեց, չոքեց սուրբ պատկերի առաջ և սկսեց ջերմեռանդութեամբ աղօթել... Աղօթում էր Հայրիկի, մայրիկի և իր համար, դայեակի, Միտեայի և նրա հիւանդ մօր համար, մի խօսքով բոլոր խեղճերի համար նա աղօթում էր։

—«Աստուած, լսիր իմ աղօթքը», շշնջում էր նա։ Եւ ամենայն կերպ աշխատում էր հեռացնել իրանից երկրային տխուր մտքերը ու մտածել միայն Աստծոյ վրայ։ Դայեակը, վերադառնալով թշթշող հեշտաեռով և տեսնելով իր «սիրելուն» աղօթելիս, ինքն էլ ջերմեռանդութեամբ չոքեց նրա մօտ և սրտանց հառաչելով, սկսեց ծունր դնել և աղօթք շշնջալ։

Վերջացնելով աղօթքը, դայեակը և Լենան համբուրեցան և կարգով նստեցին սեղանի շուրջը թէյ խմելու։

Թէյից յետոյ Լենան գնաց Հայրիկի մօտ և մանրամաս-

նաբար պատմեց Միտեայի մասին։ Հայրիկը սիրով և ուշադրութեամբ լսում էր նրան, խաղում էր նրա շէկ գանգուրներով, դուցէ մտաբերելով իր անցեալը, իր բախտաւոր ժամանակը։

—«Օգնիր նրան, Հայրիկ... նրա մայրը Հիւանդ է,—ասում էր Լենան փաթաթելով Հօր պարանոցով, ես սաստիկ խղճում եմ նրանց երկուսին էլ... Մինչև անգամ լաց եմ եղել .. օգնիր նրանց!»

Հայրիկը խոստացաւ օգնել. իսկ Լենան ուրախութիւնից Ոչխոտելով շարունակում էր.

—«Գիտես ինչ, Հայրիկ։ Ես մի բան էլ եմ խնդրելու»...

—Ի՞նչ բան ես խնդրելու։

—«Թող ինձ, բարի, սիրելի Հայրիկ, գայեակիս հետ գընալ Միտեայի մօտ... Ես նրան կասեմ, որ նա խաղալիկներ բերէ, նա պիտէ շինել... Հայրիկ, դու ինձ համար խաղալիկներ կըգնե՞ս նրանից»։

— Կըգնեմ, կըգնեմ։

—«Իսկ ինձ նրա մօտ գնալ կարելի է։

—Ինչո՞ւ ես դու գնում։ Ես կուզարկեմ ում և իցէ։

—«Ոչ, Հայրիկ, թոյլ տուր ես գնամ... Ես ցանկանում եմ տեսնել, ո՞րտեղ է նա ապրում, ի՞նչպէս է նրանց տունը։ Ես նրա և մօր համար քաղցրաւենիք կըտանեմ»։

— Այ դու, յիմարիկս! Այն խեղճերի Ի՞նչին է պէտք քաղցրաւենիքը, երբ նրանք երեւի հաց էլ չունեն ուտելու։ Աւելի լաւ է փող տար նրանց համար։

Եւ այդ ասելով նա Հանեց քսակը, վերցրեց մի րուբլի և տւաւ Լենային։

—«Հայրիկս! սիրելիս! ազաւնեակս!...» բացականչում էր Լենան և ծածկում Հօր դէմքը համբոյրներով... Նրա ուրախութեանը սահման չկար...

—

Կէս ժամից յետոյ գայեակն ու Լենան դուրս եկան փողոց։ Նրանց չորս կողմը աղմկալի էր, լոյս և ուրախ։ Կեանքը ամե-

նայն տեղ եռում էր: Յուրտ օդը թարմայնում էր նրանց: Պարզ, կապոյտ երկնքի վրայ պայծառ փայլում էր արեւը, տաքացնելով քաղաքը իր նիզիչ ճառագայթներով: Արեւը խաղացնելով իր ճառագայթները եկեղեցիների խաչերի և գմբէթների վրայ, թափանցում էր կտուրից կախ ընկած սառցեայ բիւրեղների մէջ և տալիս էր նրանց ծիածանի բոլոր գոյները. պատուհանների սառցով նախշած ապակիների և գետնի վրայ, ձիւնի փոշիները փայլում և այրւում էին, ինչպէս միլիոնաւոր թանգագին գոհարներ: Լենան չէր կարողանում նայել շրջապատող կուրացուցիչ փայլին... Նա ակամայ աչքերը խփում էր և ժամանակ առ ժամանակ սեղմւում դէպի պառաւ դայեակը, ճակատի վրայ քաշելով սպիտակ գլխարկը: Փողոցներում անց ու դարձ էին անում մարդիկ: Լսւում էր խօսակցութիւն, ուրախ ծիծաղ: Տների արանքներում պատահում էին սառցեայ բիւրեղներով զարդարւած ծառեր և ինչպէս դեղեցիկ էին նրանք! Նրանց հիանալի, ֆանտաստիկական ձևերը գրաւում էին անցորդների ուշադրութիւնը: Բոլորն էլ կանգնում էին և նայում... Նայում էր և Լենան... Նա երկար չէր կարողանում հեռացնել աչքը այդ հիանալի տեսարանից: Բայց ահա նրանք ծրւեցին մի նեղ փողոց, այնտեղ ծառերը աւելի շատ էին, բարձր տները, շքեղ ու հարուստ խանութները քիչ-քիչ անհետանում էին, փոխւելով քաշլիկ տնակների, աղքատ խանութների և տեղ-տեղ էլ պատահում էին փայտեայ հասարակ խրճիթներ ծածկւած յարդով:

—«Դայեակս, ասա որտեղ է ապրում Միտեան,—անհամբերութեամբ հարցրեց Լենան պառաւից,—ասում էիր որ հեռու չէ ապրում»:

—Չուտով կըհասնենք, իմ սիրելիս, մօտեցել ենք... Ահա արդէն երևում է տունը:

—«Որտեղ է»:

—Տեսնում ես երկու հերթիկ տան վրայ... Մէկից սև սիւներով դէպի երկինք է բարձրանում ծուխը:

—«Տեսնում եմ, դայեակ։ Դու այնտեղ եղել ես»։

—Միտեայի մօտ։

—«Այո»։

—Բեռ քանի՛ անգամ եմ եղել!... Ես ու նրա մայրը մի մի գիւղից ենք։ Նրանք քայլերը արագացրին և շուտով մօտեցան մի կարմիր տգեղ երկյարկանի տան և զանգահարեցին դուռը, որը տանում էր դէպի բակը։ Ահա քաշլիկ, կեղտոտ ու խեղդող օդով սենեակ, մի փոքրիկ, համարեա թէ առաստաղից կպած երկաթէ ճոպերաւոր պատուհանով, որից հազիւ է երեւում օրւայ լոյսը։ Անկիւնումը Աստւածամօր պատկերը, իսկ մէջտեղում ոչնչով չըճաճկւած սեղան և երկու հին աթոռներ։ Դռան աջ կողմում թաց պատի տակ դրած է մի հասարակ փայտեայ անկողնակալ։ Նրա վրայ թիշերը ներս ընկած, նիհար և դունատ ինչպէս կտաւ, պառկած է մի հիւանդ կին, ճաճկւած կեղտոտ վերմակով. նրա անկողնի մօտ չոքած՝ տեղաւորւել է պատռտած շորերով մի տասն և մէկ տարեկան տղայ։ Դա Միտեան էր։

—Մայրիկ, կեր հացը,—ասում էր նա,—դու այսօր առաւօտւանից բերանդ ոչինչ չես դրել։

—«Թէ, ինչ անենք! Ես ախորժակ չունեմ, դու կեր։ Ես գիտեմ, որ դու քաղցած ես»։

Այդ րոպէին դուռը բացւեց և ներսից չքաւոր սենեակը մտան դայեակն ու Լենան։ Միտեան բարձրացաւ, հետաքրքրքրութեամբ ու զարմանքով նայում էր ներս մտնողներին։

—Բարև ձեզ, սիրելիք,—ասաց գլուխ տալով դայեակը։

—Չնորհակալ եմ, Եղիսաբէթ, որ դու դեռ չես մոռացել մեզ ու այցելում ես, պատասխանեց բարեւին հիւանդ կինը։

—Այսօր ես մենակ չեմ եկել ձեզ մօտ, այլ իմ սիրելուս հետ... Տես, մանկիկս,—ցոյց տալով դէպի տղան, դիմեց դայեակը Լենային,—ահա և Միտեան։

—«Դայեակ! դա այն տղան է, որին երէկ Վասիլին խը-

փեց,—բացականչեց Լենան և արտասուքը ակամայ թափուեց նրա աչքերից»...

—«Խեղճ, թշուառ Միտեա,—արտասանեց նա փոքր ինչ լռելուց յետոյ, դժւարութեամբ զսպելով խեղդող արտասուքը—և ինչպէս ձեր տունը կեղտոտ է և ցրուրտ... դու մայրիկիդ հետ մի ուրիշ... աւելի լաւ բնակարան փոխիր»:

—Այ դու, իմ աչքի լոյս! Ինչպէս նրանք լաւ բնակարան փոխուեն: Նրանց ո՞վ կրտայ: Չէ որ նրանք մի կոպէկ էլ չունեն, նկատեց դառն ժպիտով դայեակը:

Լենան մտաբերեց բուբլու մասին, որ ստացել էր Հօրից և իսկոյն տւաւ Միտեային: Միտեան շարժւած երեխայի հոգացողութիւնից և փաղաքշանքից, ծածկեց համբոյրներով նրա փոքրիկ ձեռքը:

—«Չարկաւոր չէ, մի համբուրիր, շփոթւած ասում էր աղջիկը: Էգուց եկ մեզ մօտ: Դայեակը ցոյց կրտայ որտեղ. խաղալիկները բեր... Իմ հայրիկս բարի է—կրգնի և քեզ փող կրտայ, որ դեղ գնես քո հիւանդ մայրիկի համար: Ես խնդրել եմ քո մասին»...

—Դու մեր բարերարուհին ես, շնորհակալութեան արտասուքով, շշնջում էր հիւանդը,—Աստւած ինքն է քեզ ուղարկել մեզ մօտ...

Երկար նստեցին դայեակն ու Լենան նրանց չքաւոր սենեակում, որտեղ պատսպարւել էին ճակատագրից գըրկւած խեղճերը: Դայեակը պատմեց հիւանդին, ինչպէս բարի է նրա «սիրելին», ինչպէս նա սիրում ու հոգում է աղքատների մասին: Միտեան և նրա հիւանդ մայրը լսելով պառաւ դայեակի խօսքերը, նայում էին և չէին կշտանում նայելուց իրանց փոքրիկ բարերարուհուն:

Լենան—օրինակելի աղջիկ է!

Թարգմ. Ջ. Ներսէսեան

Այլ եւ այլք

ԱԹԻՆՔՆ ՈՒ ՉՈՒՆԸ



Մէկ քաղաքում ցոյց էին տալիս վայրենի գազաններ և տեսնել տալու փոխարէն ստանում էին փող կամ շուն ու կատու, գազաններին ուտեցնելու համար: Մէկ մարդ կամեցաւ նայել գազաններին. նա փողոցում մի շուն բռնեց և բերեց նրան գազանանոց: Նրան նեղս տարան նայելու, իսկ շանը ձգեցին առիւծի վանդակը, ուտելու համար: Շունը պոչն իրան քաշեց և կուչ եկաւ վանդակի անկիւնում: Առիւծը մօտեցաւ նրան և սկսեց հոտոտել: Շունը պառկեց կռնակի վրայ, թաթերը բարձրացրեց և սկսեց պոչը շարժել: Առիւծը թաթով նրան դիպցրեց ու շուռ տւեց: Շունը վեր թռաւ տեղից և կանգնեց յետին ոտքերի վրայ, առիւծի առաջ: Առիւծը նայեց շանը, գլուխն այս ու այն կողմ դարձրեց, բայց չդիպաւ նրան: Երբ որ տէրը մի ձգեց առիւծի առաջ, սա մի կտոր կտրեց կերաւ, իսկ մնացածը թողեց շանը: Երեկոյեան, երբ առիւծը պառկեց քնելու, շունն էլ նրա մօտ պառկեց և գլուխը դրեց առիւծի թաթերին:

Այդ օրից սկսած շունը քնակւում էր առիւծի հետ միևնոյն վանդակում: Առիւծը չէր դիպչում նրան, ուտում էր կերակուրը, քնում էր նրա հետ միասին, երբեմն էլ խաղում էր հետը:

Մէկ օր մի պարոն գազանանոցն եկաւ և տեսնելով շանը, ճանաչեց. նա յայտնեց որ շունն իրանն է, և խնդրեց գազանանոցի տիրոջը յանձնել իրան: Տէրն ուզեց տալ, բայց հէնց որ սկսեցին շանը կանչել, որ դուրս հանեն վանդակից, առիւծը ցնցւեց և մռնչաց: Այսպէս մի ամբողջ տարի առիւծը ու շունը մնացին միևնոյն վանդակում: Մի տարուց յետոյ շունը հիւանդացաւ և սատակեց: Առիւծը վշտից էլ չէր ուտում, այլ միշտ հոտոտում և լալիս էր շանը, շարժում էր նրան թաթով: Երբ որ նա հասկացաւ թէ շունը սատակել է, յանկարծ վեր թռաւ տեղից, ցնցւեց և սկսեց պոչով կողքերին խփել, յարձակւել վանդակի պատերին և կրծել նիգերն ու յատակը:

Ողջ օրը նա զարկւում էր վանդակին այս ու այն կողմ և մռնչում էր, իսկ վերջը պարկեց սատակած շան կողքին և լռեց: Տէրը կամեցաւ դուրս հանել շանը, բայց առիւծը ոչ ոքի թոյլ չէր տալիս մօտենալ:

Տէրը մտածեց, որ առիւծն իր վիշտը կըմոռանայ, եթէ մի ուրիշ շուն տրւի, ուստի ձգեց առիւծի վանդակը մի կենդանի շուն: Սակայն առիւծը պատառ-պատառ արեց նրան: Ապա նա դրկեց մեռած շանն իր թաթերով և այսպէս մնաց անշարժ դլուխ եամբ հինգ օր: Վեցերորդ օրը առիւծն էլ սատակեց:

Փոխ. Ա. Նիկողոսեան

ԳԹԱՒՈՑ ՀՆԴԿԱՑԻՆ

(Հին առասպել)

Հնդկացիները գերի վերցրին մի երեւտասարդ անգլիացու, կապեցին ծառից և ուզում էին սպանել:

Մի ծերունի հնդկացի մօտեցաւ նրանց և ասաց.

—Միք սպանիլ նրան, այլ խնդրեմ ինձ յանձնէք:

Նրան յանձնեցին:

Ծերունի հնդկացին ազատեց անգլիացուն, տարաւ իր խըրճիթը, կերակրեց, ասբողջ գիշեր իր մօտ պահեց: Առաւօտեան հնդկացին իր հետ առաւ անգլիացուն և ճանապարհ ընկան: Նրանք երկար գնում էին և երբ հասան անգլիական սահմանագլխին՝ հնդկացին ասաց.

—Ձերոնք սպանեցին իմ որդուն, բայց ես խնայում եմ քեզ. այժմ գնա՛ ձերոնց մօտ և շարունակեցէք սպանել մեզ:

Անգլիացին զարմացաւ և ասաց.

—Ինչո՞ւ ես ծաղրում ինձ. ես գիտեմ, որ մերոնք սպանեցին քո որդուն, իսկոյն սպանիր և ինձ:

Այդ ժամանակ հնդկացին պատասխանեց.

—Երբ ուզում էին քեզ սպանել, ես լիշեցի իմ որդուն և խղճացի քեզ. ես չեմ ծիծաղում, այլ ասում եմ՝ գնա ձերոնց մօտ և էլի սպանեցէք մեզ:

Արտասւալից աչքերով կրկնեց ծերունին և արձակեց անգլիացի անվեհեր երիտասարդին:

Հ. Բ.

ԶԻԱՐՃԱԼԻՔ

ԳՐԱԽԱՂԱՊ (ՓՈՆՏ)

7

ԿԱՐՃ ՊԱՏԱՍԽԱՆ

Կազմւում է շրջան: Խաղացողներից մէկը դիմում է մեսին մի հարցով, որին պիտի պատասխանէ նա իսկոյնևեւ, բայց միայն մի բառով, և ապա իր հերթին հարց տայ կողքին նստող անձնաւորութեանը, իսկ վերջինս էլ իր կողքինին և այսպէս շարունակ: Ներանցից ով որ դանդաղ է պատասխանում, և կամ պատասխանում է մի քանի բառով, նա վճարում է ֆանտ: Օրինակ. «Փուք, առհասարակ, առաւօտները ինչ ժամանակն էք զարթնում:— Լուսաբացին»: «Պարահանդիսում սովորաբար ո՞ւմ հետ էք պարում:—Ձատերի»: «Ո՞ւր կը լինէք այսօր երեկոյեան:—Տանը»: «Ո՞ւր էք մտադիր գնալ այս ամառ:—Կրմտաճեմ»: «Ի՞նչ էք շինում ազատ ժամանակը:— Կարդում եմ»: «Վաղը ո՞րտեղ տեսնեմ ձեզ:—Թատրոնում»: «Այս Նոր-Տարւայ համար ինչ կրտաք ինձ կարդալու:—Պատկերապարդ «Աղբիւր»... և այլն:

8

Հ Ա Ն Ե Ր Ի Լ Ի Ճ

Խաղացողները նստում են սեղանի շուրջը, որի վրայ մէջտեղում, գծւած է լիճ ներկայացնող մի մեծ շրջան. բացի այդ, իւրաքանչիւր խաղացող իր առաջը (դարձեալ սեղանի վրայ) պիտի գծէ մի փոքրիկ շրջան, որ պատկերացնում է լիճ: Խաղ սկսողը բացականչում է.—«ընդհանուր լիճ». «Հարևանի լիճ՝ աջ, ձախ», և ձեռքը դնում է իր յիշած տեղը: Մրւսները պիտի անեն միևնոյնը: Ով սխալւում է և ձեռքը մեկնում է այնտեղ, ուր Հարկաւոր չէ մեկնել, նա վճարում է ֆանտ: Որքան շուտ-շուտ բացականչութիւններ անէ խաղ ղեկավարողը,—խաղն այնքան աւելի կենդանի և աշխոյժ կանցնի, որով և շատ ֆանտեր կրվաստակեն:

Գ. Բաբուրեանց

Ա Ն Ե Կ Դ Ո Տ

—

—Քոյրիկ, ինչո՞ւ համար են այս հեռագրական սիւների վրայ փոքրիկ թիթեղեայ ամանները:

—Իրանք, սիրելի եղբայրիկս, այդ թիթեղեայ ամաններըը նրա համար են, որ երբ հեռագիրը վազելու ժամանակ յոգնում է, մի փոքր նստում է դրանց վրայ և հանգստանում:

ԱՂԲԻՒՐ

Ք. ՔԸՓԻՆ

ԸՆՏԱՆԻՔ ԹԷ՞ ԴՊՐՈՑ

II

Մենք շեշտեցինք, որ ընտանիքը և դպրոցը դաստիարակութեան տեսակէտից բոլորովին տարբեր նպատակներ ունեն և բուն դաստիարակութիւնը վերապահեցինք ընտանիքին: Բայց անկարելի է թուգցնել այն տարակուսանքները, որ ծագում են մարդու մտքում, երբ նա իրան հարց է տալիս, թէ ինչ պիտի ներկայացնէ ինքն ընտանիքը, որպէս դի կարողանայ վայելուչ դաստիարակութիւն տալ իր վոքրիկ անդամներին: Սխալ է կարծել, թէ ամեն մի ընտանիք կարող է իսկական դաստիարակութիւն տալ իր զաւակներին: Եթէ ընտանիքը իր հիմունքներով, իր էութեամբ անբարոյական է, անմիտ է, նա երբէք չէ կարող տալ իր վոքրիկներին բարոյական և մտաւոր դաստիարակութիւն: Օրինակ եթէ մի ընտանիք անզործ է, ծոյլ է, պարապ է, ժամավաճառ է, բայց անսահման կերպով շռայլում է ուրիշների աշխատանքը, ապրում է ուրիշներին կեղեքելով, մենք չենք հասկանում, թէ ինչպէս պիտի նա մարդասիրական զգացումներ ծլեցնէ իր անդամների սրտում: Եթէ ընտանիքի ղեկավարները համոզուած են, որ զարգացած միտքը մարդուն հաց չէ տալիս, այլ մի կտոր հաց ունենալու համար բոլորովին ուրիշ տեսակի յատկութիւններ են հարկաւոր, ապա նա չէ կարող ուսանդ ու ոգի ներշնչել երեխաներին դէպի մտաճոզութիւնը և աշխատանքը:

Ուստի եթէ մարդ ինքն իրան հարց է տալիս, թէ արդեօք մի ժողովրդի վերաստեղծումը հին սերնդից պիտի սկսէ, թէ նորից, մնում է շւարած: Մարդու միտն է գալիս այստեղ հաւի և ձւի խնդիրը: Ո՞րն է առաջ գոյութիւն ըստացել. հաւը թէ ձուն: Որպէս զի մի ձու գոյութիւն ունենայ, հարկաւոր է որ նրան ածող հաւն էլ գոյութիւն ունեցած լինի: Բայց որպէս զի մի հաւ գոյութիւն ունեցած լինի, անհրաժեշտ է որ նա մի ձւից դուրս եկած լինի: Որպէս զի երեխաները լաւ դաստիարակութիւն ստանան, հարկաւոր է որ նրանց ծնողները դաստիարակւած լինին: Իսկ եթէ այդ պայմանը չըկայ, դպրոցը ոչ մի կերպով չէ կարող երեխաներին կանոնաւոր դաստիարակութիւն տալ, որովհետև որպէս մագնիսի սլաքը միշտ դէպի հիւսիս է ձգտում, նոյնպէս էլ երեխաները ձգտում են նմանւելու իրանց ծնողներին, որոնք տասն անգամ աւելի ազդեցութիւն ունեն, քան ուսուցիչները:

Մենք կարծում ենք, որ ժողովրդի դաստիարակութիւնը պիտի սկսւի միանգամից բոլոր կողմերից: Հին ու նոր սերունդները պիտի միաժամանակ ու զուգընթացաբար կրթութիւն ստանան: Մենք սխալ ենք համարում քաղաքակիրթ ժողովուրդների այն սկզբունքը, թէ դպրոցները երեխաների համար են: Բոլոր քաղաքակիրթ երկրներում գոյութիւն ունին այդպէս անւանւած լուսաւորուած նախարարութիւններ: Ի՞նչ է որանց գլխաւոր նպատակը, ընչո՞վ են որանք արդարացնում իրանց գոյութիւնը... Նրանով, որ երեխաների համար դպրոցներ են բացում, ուր նրանց արհեստներ են սովորցնում (լեզուն էլ, երկրաչափութիւնն էլ, ֆիզիկան էլ... արհեստներ են): Ժամանակակից դպրոցների լկէալը բազմարհեստեան դպրոցներն են (պոլիտեխնիկում), որոնց միակ նպատակն է տեխնիկան զարգացնել, տնտեսական կեանքը ծաղկեցնել: Որպէս բոլոր ճանապարհները դէպի Պոլիս են տանում, նոյնպէս էլ բոլոր տարրական ու միջնակարգ դպրոցների վերջնական հանգոյցը բազմարհեստեան դպրոցն է: Թէև այս ու

այն դպրոցը շատ թէ քիչ շեղւում է ընդհանուր ուղղութիւնից, բայց այդ ոչինչ նշանակութիւն չունի, ոչին, էութիւնը նոյնն է մնում: Թէք մակերևոյթի վրայով գլորուող գունդը նոյնպէս դէպի երկրի կենդրոնն է ձգտում, որպէս և ուղղաձիգ վայր ընկնող գնդակահար նզած թռչունը... Վերցրէք օրինակ իդեական գիմնազիօնները. սրանք ըստ երևոյթին ոչ մի արհեստ չեն սովորեցնում, այլ զուտ կրթութիւն են տալիս: Բայց ո՛չ: Նրանք պատրաստում են «պատշաճաւոր» կանայք միայն տնտեսական շահերով հետաքրքրուող ինժիներն կամ քժշկի համար... Ուրեմն իդեական գիմնազիօնն էլ բազմաբեստեան դպրոցի մի ճիւղն է: Այդպէս են և հոգևոր դպրոցները, և համալսարանները և այլն: Մենք բոլորովին հակառակ չենք դպրոցական սիստեմի այդ ուղղութեան: Մենք կամենում ենք միայն որ մէջտեղ կեղծիք չըլինի, այլ ամեն բան իր իսկական անունն ունենայ: Ուստի այն, ինչը սովորաբար անւանում են լուսաւորութեան նախարարութիւն, մենք համարում ենք աւելի տնտեսութեան կամ տեխնիկայի նախարարութիւն, որովհետև բուն լուսաւորութիւնն չէ կարող տարածել այդպիսի միակողմանիութեամբ: Շատ ու շատ անգամ մենք հանդիպում ենք տնտեսական կեանքի համար շատ լաւ պատրաստուած մարդկների, որոնցից սակայն բնաւ մարդկայնութեան անուշահոտութիւնն չէ բուրում... Պատճառն այն է, որ սրանց ուղղութիւն տուող դպրոցն է եղել, որը չէ կարող դաստիարակել, այլ կարող է սովորեցնել ու իրօք էլ սովորեցրել է...

Իսկական մարդավայել դաստիարակութիւնն պէտք է ոչ թէ դպրոցից, այլ ընտանիքից սպասել: Բայց որովհետև ընտանիքի սուաճ դաստիարակութիւնը կախուած է նախ ընտանիքի ընդհանուր դրութիւնից, ապա նրա ղեկավարներից, ուստի յանուն ժողովուրդների դաստիարակութեան հարկաւոր է երկու կարևոր խնդիրների լաւ ուշադրութիւն դարձնել:

1) Ընտանիքի ընդհանուր դրութիւնը պիտի բարւոքւի, նորմալ դառնայ: Բուն դաստիարակութիւնը կարող է դոյու-

թիւն ունենալ միայն ընտանիքի մէջ: Բուն ընտանիքը մի սրբազան հիմնարկութիւն է, որի մէջ պիտի արտացոլէ տիեզերական սրբութիւնը, բարութիւնը, գեղեցկութիւնը... Ձատ խոր միտք կայ այն աւանդութեան մէջ, թէ աստուածները իրանց տիրութիւնը փարատելու համար մարդկային ընտանիք ստեղծեցին և բնակեցրին նրան դրախտի մէջ: Եւ իրօք տիեզերքի մէջ աւելի բարդ, գիտակցական, նշանաւոր երևոյթ չկայ, քան մարդկային ընտանիքն է... Ուստի որքան բարձրը է տիեզերական երևոյթների շարքում մի իսկական, զուտ, սրբազան ընտանիքը, նոյնքան ցածր է նա իր ընկած դրութեան մէջ: Երկնքի և դժոխքի դաղափարը հաւանականօրէն ընտանիքից է վերցրած, որովհետև ընտանիքը կամ երկինք պիտի ներկայացնէ կամ դժոխք:

Բայց նորմալ ընտանիքը չէ կարող գոյութիւն ունենալ, եթէ հասարակած ամբողջ կազմը անորմալ է: Ընտանիքի դրութիւնը կախուած է հասարակութեան դրութիւնից: Ուրեմն ընտանեկան դաստիարակութիւնն անխզելի կապերով կապուած է սոցիալական խնդրի հետ: Եւ թէկուզ յանուն ընտանեկան դաստիարակութեան՝ պէտք է լուրջ ուշադրութիւն դարձնել սոցիալական խնդրի վրայ: Տնտեսապէս ընկած ընտանիքը աննորմալ դրութեան մէջ է, ուստի և նրանից չէ կարելի կանոնաւոր դաստիարակութիւն պահանջել: Բայց անորմալ է և այն ընտանիքը, որ սեփական աշխատութիւն չունենալով, ուրիշ ընտանիքների հիւթն է ծծում: Այդպիսի ընտանիքի մէջ հնարաւոր է թերևս ֆիզիկական դաստիարակութիւնը, իսկ բարոյականի ու մտաւորի մասին խօսք լինել չէ կարող, քանի որ նա իր հիմունքներով արդէն անբարոյական է և անմտութիւնը համապատասխան է նրա դիրքին: Մեր ժամանակում ընդհանրապէս նորմալ դրութեան մօտ է կանգնած միջին դասակարգի ընտանիքը, որը և պիտի առաջ մղէ ազգերի և մարդկութեան սայլը:

Դաստիարակութեան գործի յաջողութեան համար անհրա-

ժեշտ է լուրջ ուշադրութիւն դարձնել հասակաւոր սերնդի վրայ։ Քրիստոնէութիւնը, օրինակ, տարածուել է նախ հասակաւորների մէջ։ Քրիստոս շատ էր սիրում երեխաներին, բայց երբէք նրանց հետ դրծ չէր ունենում։ Նա շփւում էր շարունակ հասակաւորների հետ, նրանց էր կրթում. որովհետև հաւատացած էր, թէ մինչև որ հասակաւորների կամքը, ձգտումը, սիրտը չբիւրուի, ոչինչ չէ կարող փոխուել կեանքի մէջ։ Մեզ խիստ ուրախացնում է այն, որ մեր ժամանակում սկսել են ուշ դարձնել հասակաւոր սերնդի կրթուքեան վրայ, որի հետևանքն են կիրակնօրեայ դպրոցները, ժողովրդական համալսարանները և այլն։ Մեզ թւում է, որ կրթական սիստէմը սկսում է այդպիսով փոխուել, այսինքն վերանում է այն սկզբունքը, թէ դպրոցը մանկական հիմնարկութիւն է։ Այսուհետև ուրեմն լուսաւորութեան նախանձախնդիր անհատները կըսկսեն աւելի լուրջ ուշադրութիւն դարձնել եկեղեցու, դրականութեան, թատրոնի և բոլոր այն հիմնարկութիւնների վրայ, որոնց նպատակն է՝ կրթել հասակաւորներին։ Եւ որովհետև այդպիսի հաստատութիւնների մէջ ամենաբարձր տեղը դրականութեանը և մամուլին է պատկանում, ուստի և վերակենդանանալ կսմեցող բոլոր ժողովուրդները կըսկսեն ամենալուրջ ուշադրութիւն դարձնել դրականութեան և մամուլի վրայ։

Ս. Թ.

Ընտանիքը որպէս կրթական հիմնարկութիւն

Բայց եթէ մեր երեխաների կրթութիւնը մեծ մասամբ յետ է ընկած, արհամարհած է և շատ բանի կարօտ, սակայն կենսական պրակտիկի և փորձառութեան մտքով նրանք անժամանակ են զարգացել և հեռուն գնացել։ Ամենուրեք կարելի է հանդիպել գրել և կարդալ չիմացող երեխաների, որոնք փոխադարձ սիրոյ, համբերութեան, զսպելու և հասարակութեան օգտին ազնիւ աշխատանքի մասին երբէք չեն լսել, բայց, դրա փոխարէն, շատ են լսել մեծերի դատողութիւնները թղթախաղի, կաշառքների, հասարակաց կանանց, սկանդալների և ցինիկական բնաւորութիւն ունեցող

անեկդոտների մասին. Ծնողների հայհոյանքներին, խոշոր կռիւներին շատ անգամ են վկայ եղել։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ իրանց տեսած և լսած այն կեղտը և լրբութիւնները շատերի խելքին միանգամայն անմատչելի են—և փառք Աստծոյ։

Երեխաները չեն հասկանում թէ ինչ կընշանակի «սիրուհի», «պահոց», «ապօրինի ծնած», չըգիտեն, թէ ինչ միտք և նշանակութիւն ունին՝ «ականջները ճակատից բարձր չեն լինում» «հաստ փողատուփը ամեն բանի դեկավար է» և այլն այսպիսի դարձւածները, բայց և այնպէս մեծերի բոլոր այս ասածները իսոր արմատ են դցում երեխայի հոգու մէջ, փոքրիկների խելքը սոիպւում են պործել, յայտնի ուղղութեամբ, իրանց եզրակցութիւնները անել և դրանց համեմատ պահել իրանց շրջապատողների վերաբերմամբ։ Այսպէս, օրինակ երեխաները գիտեն և շատ անգամ էլ լսել են, որ նրանք Ձեր, շատ հարուստ պապ ունին, որ անպնիւ ճանապարհներով ահագին հարստութիւն է դիզել, դրա համար դատաստանի է մատնւած եղել և Սրբիր աքսորւել։ Հայրը և մայրը այդ պապին տանել չեն կարողանում և շարունակ հայհոյում են։ Բայց երբ մէկ անգամ «հարուստ աւազակը» բոլորովին անսպասելի կերպով նրանց այցելում է,—Ծնողների վրայ չանկարծակի այլակերպութիւն է առաջ գալիս. նրանք գրականապէս փայլում են ուրախութիւնից, փողի տոպրակը պահպանում են, և ինչպէս մի թանկագին, հարուստ մարդու, չընայելով, որ «կեղեքիչը և աւազակը» մայրիկին չիմար անւանեց, հայրիկին իդիոս,—նրանք ոչ թէ չըբողոքեցին և չրվիրաւորւեցին, այլ ընդհակառակը, այդ հաճոյականութիւնը ժպտով ընդունեցին և յարգանքով համբուրեցին Ձերուհու ձեռքը։ Այս բոլոր և սրա նման հազար տեսարաններ, դարս ւելով և տեղաւորւելով երեխայի մտքում, ուղիղ և բնական ճանապարհով նրան մի անխուսափելի եզրակացութեան են բերում, որ նրանց մեծերից շատ անգամ լսած փրպն աւելի քան ճշմարիտ է, այսինքն, ճշմարտութեամբ աշխարհիս երեսին չես կարող ապրել, իսկ ևթէ կհանդուգն յաջողութիւն ևս գամենում ունենալ—առիթից օգտւիր եւ հանգամանքներին յարմարւիր. .

Այսպիսով, մեր երեխաների մէջ, այբ ու բենից և դասագրքերից դեռ շատ շուտ, տեսական օրինակով և բնական հետևողութեամբ, յայտնի աշխարհահայեցողութիւն է կազմւում։ Դպրոցի, չեռոց գլխաւորապէս իսկական կեանքի համար մնում է միայն հաստատել այդ գործնական փիլիսոփայութեան ճշմարտութիւնը և, այսպէս ասած, կայունութեան բնաւորութիւն տալ—բնաւորութիւն գարերով հաստատւած անխուսափելի ճշմարտութեան...

Փոխ. **Ռ. Զավհանճանեան**

«ԱՄԻՐԱՆ»

—

Աղբիւրի սոյն համարում մեր գրած Ամիրան վերնագրով առասպելը Հայաստանից է անցել Վրաստան։ Ամիրանը միևնոյն մեր Արտաւազդն է, որ Մասիս լեռան ստորոտում շղթայած բանտարկած է մի մուխ այրում։ Արտաւազդը Ամիրանի նման ճգնում է խորտակել իր շղթաները, ազատել կապանքներից և վերջ տալ աշխարհին. երկու շուն էլ անդադար կրծում, մաշում են նրա շղթաները, բայց դարբինների մուրճ խփելու ձայնից կրկին զօրանում են բանտարկեալի կապանքները։ Արտաւազդը այս պատիժը ստացել է հօր անէծքից։ Հայոց Արտաշէս Ա թագաւորը, անիծելով իր որդուն, ասել է.

«Եթէ դու որսի ելնես
Ազատ Մասիսի վրայ,
Քաջերը ձեզ կըբռնեն
Կըտանեն ազատ Մասիսի վրայ,
Այնտեղ կըմնաս եւ լոյս չես տեսնի»

(Խոր. Գլ. ԿԱ)

Արտաւազդի այս աւանդութիւնը, անցնելով Վրաստան, այստեղ, պահպանելով առասպելի նախկին իմաստը, ենթարկւում է զանազան փոփոխութիւնների, բայց սկսում է կրել քրիստոնէական բնաւորութիւն։ Այսպէս վրաց աւանդութեան մէջ ասւած է, որ Ամիրան Քրիստոսի կնքահայրն է լել, ու տեսնելով, որ մարդիկ կրակի կարօտութիւն են քաշում, Քրիստոսից ծածուկ գողանում է երկնքից սրբազան կրակը և բերում աշխարհ. բացւում է գողութիւնը, և Քրիստոս պատժում է Ամիրանին։

Ամիրանի մասին ասած առասպելը զանազան ազգերի մէջ զանազան վարիանտներով է պատմւում։

Մեր պատմածքում Ամիրանը ընկած է մի մուխ այրում Կաղբէկ սարի մօտ. իսկ Կաբարդացիք պատմում են մի ինչոր Ծերունու մասին, որ բևեռւած էր Էլբրուս սարին։ Այս Ծերունին յիշեցնում է յունաց Պրոմէթէոսին, որին երկնքից կրակ յափշտակելու պատճառով Արամազդ բևեռում է լերկ ապառաժին։ Աւանդական Ամիրան անունը Միջին Ասիայի խրխզների մէջ դարձել է Արման, որը չարոգու տիպար է ներկայացնում։ Իսկ իրանական Անրիմանը—Արիմն, որ բացասական սկզբունքի ներկայացուցիչ էր, Ամիրանի նման բանտարկած էր մի ստորերկրեայ անտառի մէջ։

Այսպիսով մենք տեսնում ենք, որ միևնոյն առասպելը, անցնելով զանազան երկիրներ, ոչ միայն փոփոխութիւնների է ենթարկւում, այլ և աղաւաղւում է նրա գլխաւոր հերոսի անունը։ Թոյլ ենք տալիս մեզ ենթադրելու, որ Ամիրան, Արման, Անրիման ու անունները դուրս են եկել Արմեն

խօսքից, որով մեր հարևան ազգերը մկրտել են իրանց դիւցազներին. այս դէպքում մենք պէտք է ընդունենք, որ այդ առասպելը զուտ հայկական է։

Դէպքից օգուտ քաղելով, ուսենք մի քանի խօսք մեր Առուն-Հարուն աւանդութեան մասին, որ տպագրեցաւ այս տարւայ Աղբիւրի № 11-ում։ Առուն-Հարունը մեր պատմաճ.ում մի անձնաւորութիւն է ներկայացնում, այն ինչ ասորիների մէջ Առուն-Հարունը երկու եղբայրների անուններ են, միայն ասորիները, մինչև անգամ հայերից ոմանք, Հարունի տեղ ասում են Ղարուն։ Երկու դէպքումն էլ Առուն-Հարունը ներկայացնում է ագահութեան տիպար, զանազան վարիանտներով նկարագրւած։

Ցարուբիւն Թումանեան

ԳՈՒՍՏԱՖՍՈՆԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

—

Իրչարդ Գուստաֆսոն, որի մի հէքիաթը տպագրում ենք Աղբիւրի ներկայ №-ում և շարունակաբար կը տպագրենք ուրիշները, ծնւել է Չեցիայի Ստոկհոլմ մայրաքաղաքում 1840 թ. օգոստոսի 11-ին։ Անգերսընի նման, նա էլ հիշակարգ զաւակ էր։ Սահմանափակ միջոցների տէր լինելով, հայրը չէր կարող կանոնաւոր կրթութիւն տալ մանուկին, որի բարձր ընդունակութիւնները շատ վաղ երևան եկան, և արդէն 13 տարեկան հասակում նա ստիպւած էր հանել որդուն դպրոցից, որ իր համար հաց վաստակէ։ Նա որդուն տւեց Ծառայելու մի վաճառականի մօտ, որտեղ մանուկը մի քանի տարի մնաց, որպէս գործակատար։ Ծառայութիւնից ազատ իւրաքանչիւր րոպէ Իչարդն աշխատում էր գործադրել իր գիտութիւններն ընդարձակելու վրայ, սակայն այսպիսի հատուկտոր պարապմունքները չէին գոհացնում ուսումնասիրաւ պատանուն և բացի դրանից ծառայութիւնը շատ էր նեղում նրան. այդ պատճառով նա միշտ մտածում էր թողնել իր այդ գործը և վերջապէս, քսան տարեկան հասակում դուրս գալով ծառայութիւնից, դերասանական մի շրջագայող խմբի անդամ դարձաւ։ Երեք տարի անցկացնելով այնտեղ, երիտասարդը վերջապէս սկսեց այն գործունէութիւնը, որ չափազանց գրաւում էր նրան։ 1864 թ. նա ընդունւեց որպէս մշտական աշխատակից Սըտոկհոլմում հրատարակւող «Օրւայ նորութիւնը» անունով լրագրի, իսկ երկու տարի յետոյ նա որպէս «Երեկոյեան թերթ» լրագրի թղթակից, գնաց Պարիզ, որտեղ մի ամբողջ տարի ապրեց։ Այստեղ Գուստաֆսոնին տիրեց ճանապարհորդութիւններ անելու բուռն ցանկութիւնը։ Առանց երկար մըտածելու, նա ճանապարհորդական

պայուսակը ձգեց ուսին, վերառաւ գաւազան և ոտքով պտտեց ամբողջ Ֆրանսիան, յետոյ գնաց Զւիցերիա և Հաւարիայի վրայով անցաւ Աւստրիա. մի քանի ժամանակ Վիէննայում ապրելով, Գուստաֆսոնը նորից սկսեց ճանապարհորդել.—Դունայի երկարութեամբ նա անցաւ Թիւրքիա, այցելեց Յունաստանը, Իտալիան և Գերմանիայի վրայով վերադարձաւ իր հայրենիքը—Զւեցիա։ Այստեղ նա իր ճանապարհորդական նկատողութիւնները տպագրեց «Երկոյեան Կրադրում», իսկ յետոյ դրանք «Հիւսիսից—Հարաւ» վերնագրով առանձին հրատարակեց։

Հայրենիք վերադառնալով, Գուստաֆսոնն սկսեց անխոնջ կերպով աշխատել. բայց բազմաթիւ վէպերից ու բանաստեղծութիւններից, շատ կարճ ժամանակամիջոցում նա Ստոկհոլմի երկրորդական թատրոնների համար դրեց մօտաւորապէս հարիւր պիէս։ 1869 թ. նա ինքն սկսեց մի պատկերազարդ շաբաթաթերթ հրատարակել, որը չընայելով բազմաթիւ մրցակից, ներ ունէր, շատ մեծ յաջողութիւն ունեցաւ։ Բացի հէրիաթների ժողովածուից, Գուստաֆսոնը 1875 թ. հրատարակեց ժողովրդական կեանքից վերառած վէպերի մի ժողովածու, որը շատ լաւ ընդունելութիւն գտաւ Զւեցիայում։

Ըս համառօտ կենսագրութիւնից երևում է, որ շւեդական բանաստեղծը լոկ իր եռանդի և հաստատակամութեան շնորհիւ է հռչակ ձեռք բերել, որովհետև բոլոր արտաքին պայմանները չափազանց անբարեյաջող կերպով էին բարդուած նրա գէմ։ Ներկայումս նա բոլորովին անկախ դիրք ունի և կարող է ամբողջովին անձնատուր լինել իր կոչման։ Գուստաֆսոնի յաջողութիւնը գրական աստիճանում ապացուցանում է, որ նրա գրուածքները արձագանք են գտել ընթերցողների սրտում։ Մեր հայ ընթերցասէր մանուկներին առաջարկում ենք շւեդացի գրողի ընտիր հէքիաթներից մի քանիսը, յուսալով, որ դրանք լաւ ընդունելութիւն կըգտնեն և նրանց կողմից։

Յ. Ա.

ԵՐԵԽԱՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Ներկայումս Ամերիկայում հրատարակւում են լրագիրներ երեխաների ձեռքով՝ երեխաների համար։

Տասներեք տարեկան մի մանուկ, Ժորժ Զէյուլէր անունով, մեքենայապետ է մի շոգենաւում։ Ութնամեայ մի մանուկ՝ Հարրի Փիւկան, ծառայելով իր հօր մօտ, որը կաշեզէնի առևտրով էր պարապում, 900 մղոն ճանապարհ կտրելով, վերադաձաւ տուն 300 դոլար փող բերելով վաճառած ապրանքի համար։

Ամերիկայում տասն և երկու

տարեկան երեխաները ընտրութիւնների ժամանակ քաղաքական ճառերով էին զբաղւած։

Աւելի յաջողութիւն ունէր դրանցից մէկը, Փրանկ Վադսըն անունով, որը Նիւ-Եորքի արևելեան սահմաններում համարւում էր իբրև փողոցային հռետոր։ Մանուկների մի ահագին խումբ—իր ընկերները,—ամեն տեղ ուղեկցում էին նրան և տանում էին մի տեղից միւս տեղը նրա հռետորական ամբիոնը, որ մի հին արկղ է։

Հընայելով, որ նրա ճառերը գլխաւորապէս լրագրական շինծու փրազներ ու ընտրութիւնների ժամանակ արտասանած պլատոնական ճառերի կտորներ են, այնուամենայնիւ նա գրաւում էր բազմաթիւ ունկնդիրներ, որոնք յայտնում էին իրանց բաւականութիւնը այդ ճառերի համար։

Խառն լուրեր

ՕՏԱՐՈՏԻ ԼՐԱԴԻՐ

Աշխարհի բոլոր լրագիրներից ամենասակաւ տարածւած է Բերլինի «Կայսերական լրագիրը», որ տպագրւում է միայն երկու օրինակ։ Այդ լրագրի միակ բաժանորդը Վիլհելմ կայսրն է. այնուամենայնիւ նա պարունակում է ամենաթարմ տեղեկութիւններ աշխարհի բոլոր ծայրերից։

—

ԻՆՉԻ՞Ց Է ԲԱՂԿԱՑԱԾ ՄԱՐԴ

—

Մի գերմանական գիտնական գտել է, որ առողջ մարդը պարունակում է իր մարմնի մէջ 1200 ձւերի սպիտակուց ու դեղնուց։ Մարդու մարմնի մէջ գտնւած երկաթից կարելի է պատրաստել 7 հատ մեծ մեխ, ճարպից՝ 6 ու կէս կիլոգրամ մոմ, ածխածնից 65 հատ հաստ մատիտ, ֆոսֆորից—820,000 լուցկի։ Ուրեմն ներկայիս անթիւ անհամար գերեզմանատները ապագայում մի տեսակ հանքերի տեղ կըճառայեն։ Այն ժամանակ շատ մարդիկ կըքաւեն իրանց մեղքերը, որովհետև գոնէ մեռնելուց յետոյ օգտակար կըլինեն կեանքին։

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Дозволено цензурою. Тифлисъ, 31 Декабря 1898 г.
Типографія К. И. Мартиросіанца, Орб. ул. д. № 1—2.

ՄՈՒՐՃ

ՔԱՂՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

մտնելու է առաջիկայ 1899 *թուականին իւր գոյութեան*

ՏԱՍՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻՆ

Հրատարակելով նոյն ծրագրով, որպէս մինչեւ այժմ ՀԱՐՍՏԱՑՆԵԼ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ, աւելի բազմակողմանի դարձնելով ամսագրի բաժինները, և դորա համեմատ մեծացնել Մուրճի ծաւալը—այդ ամենը կախուած է բաժանորդների թուից։

ԸՆԹԱՑԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ բաղկացած է շուրջ երեսուն հոգուց, որոնք ծանօթ են ամսագրիս մշտական ընթերցողներին։

ՀՐԱՒԻՐՈՒՄ ԵՆՔ որ հայ ընթերցող հասարակութիւնը պաշտպանի Մուրճը բաժանորդագրութիւնով, որը միակ դրաւականը կարող է լինել ամսագրի յարատեւութեան, ճոխութեան և հրատարակման կանոնաւորութեան։

ԴԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ են տրւած քիչ ունեւորներին բաժանորդ գրելու, որպէս զի Մուրճը կարողանայ կարելին չափ լայն խաւերը թափանցել։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ վերջին համարի հետ ղրկւում են բոլոր բաժանորդներին ծրարներ ճամակներով։

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐԻԵԼՈՒ ՀԱՄԱՐ դիմել խմբագրատուն Тифлисъ, въ редакцію «МУРЧЪ». արտասահմանից Tiflis. Rédaction de Mourtch. Կարելի է դիմել նաև այն բոլոր անձերին, որոնց խմբագրութիւնս հաւատացել է անդորրագրերի բլանկներ խմբագիր-հրատարակչի ստորագրութեամբ։

ԲԱԺԱՆԴԻՆԸ 10 ռուբլի, որ կարելի է վճարել կէսը ստորագրելիս, մնաց կէսը մինչև յունիսի վերջը 1899 թ.

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆԸ գտնւում է Թիֆլիս, Սերգեւսկայա փողոց, տուն № 6 և բաց է ամեն օր, ժամ 12—2, 5—7։

ՄՈՒՐՃԻ ՏԱՍԸ ՏԱՐԻԱՅ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՑՈՒՑԱԿԸ կազմւում է և պիտի հրատարակի առանձին բրոշիւրով. 1899-ի բաժանորդները այդ ցուցակը պիտի ստանան ձրի։

Բացւած է 1899 թ. բաժանորդագրութիւնը

✕ ՏԱՐԱԶ ✕

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտան. ընթերցանութեան համար:

Հրատարակւում է ցոյն ուղղութեամբ, ծրագրով եւ աշխատակից-ների մասնակցութեամբ:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամեն կիրակ, իւրաքանչիւր № 1—3 թերթ. տարեկան 47—50 №№:

Տարազի պրեմիան է ԱՆՏԻՈՔՈՆ *եւ* ԹՈՄԲՆ, *հին Յունաստանի առասպելներից խրոմօ-օլեօգրաֆիական շքեղ պատկեր.*

Ն Պ Ա Տ Ա Կ

ՏԱՐԱԶԸ ԱՂԲԻՒՐԻ հասունացած սանների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:

Տարազը ձգտում է ուսումնական ուղիղ ճանապարհով րնթացող, առաքինութեամբ օժտւած, գիտութեան անշէջ լուսով զարգացած, եղբայրասիրութեամբ բորբոքւած հայ անդամներ սնուցանել:

Ծ Ր Ա Գ Ի Ր

Գեղարւեստ եւ գիտութիւն: Պատմական, ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրւածքներ: Հանրամատչելիութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ծնե, մեռադործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային. արդիւնագործութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդւածներ եւ այլն: Փելիետօն, ծաղր, առած եւ կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, Բեբուս: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ:

Առաջիկայ 1899 թ. համար ի միջի այլոց խմբագրութեանս պարտիէզում պատրաստ են Տարազի համար Ալֆոնս Դոդէի ԱՆՍԱՀՄ եւ Ժորժ Օճեի ԿԱՄՔԻ ՈՅԺԸ—պատկերազարդ վէպեր, որոնց կլիշէները ստացւած են Պարիզից եւ արդէն մեր պահարանումն են: Տաճկա-Հայաստանի կեանքից՝ ԱԼՄՕ, տաճիկների կեանքից ՎԻՔՏՕՐԻԱՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ, ինքնուրոյն վէպեր և մի շարք գիտական լուրջ յօդւածներ, որոնց թւում ՐԱՅԸ, Իսլամ, Մեր նախորդ շրջանի բանաստեղծները. Խ, Աբովեան. Աղբիւրի համար՝ Արիստոտէլ. ՇԻԼԼԷՐ, Վալտեր Սկոտ, Զ. Դիկենս, Գուտեմբերգ, Բիբելիօ, Պետոլոցցի, Պուժեալսկի և այլն:

Բացի այն, որ Տարազը ընթերցանութեան շատ նիւթ է տալիս բելետրիստիկայից, պակաս էջեր չեն զարդարում և կրիտիկական յօդւածներով: Գեղարւեստն ու տնտեսագիտական, հասարակական գիտական յօդւածները քաղւում են և կազմւում հատատարիմ աղբիւրներից մեր մասնագէտ աշխատակիցների ձեռքով: ԱՂԲԻՒՐԸ ներկայ նոյեմբերից լոյս է տեսնում ընդարձակ ծաւալով: Առանձին հոգս է տարւելու, որ ԱՂԲԻՒՐԸ իր ըստ ամենայնի օգտակար և շքեղ բովանդակութեամբ ամեն հայ ծնողից և դաստիարակից ճանաչւի իբրև ամենալաւ բարեկամ և ընկեր հայ մանկան և պատանուն:

ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ԲՈՒԲ. պրեմիայով 7 ր. (առասպեմաց 10 ր. կամ 30 ֆր.):

Հասցէն՝ **ТИФЛИСЪ** редакція иллюст. жур. **ТАРАЗЪ** *կամ* Tiflis (Caucase). Réd. du jour. Taraz.